




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



69

ՀԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յեկրների, միացե՛ք.

ՀՈՂԱՅԻՆ ՈՐԵՆՍԳԻՐԻ



1924

ՅՐԵՍՏԻ Ե.Ռ.Ե.ՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Յ Ե Բ Ե Ղ Ա Ն



565-4292

Հ. Ս. Խ. Հ.

ԴԵԿՐԵՏՆԵՐԻ ՄԵԿ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱԲԱԾՈՒ

1923

ՀԱՅԵՍՏԱՆԻ

№ 8

Յ Ա Ն Կ

62. Հ. Ս. Խ. Հ. Հոդալին Որենսդիրը:

ՎՈՐՈՇՈՒՄ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵԻ 23-րդ շԱՅԱ-
ԾՐՁԱՆԻ

ՇՈՂԱՅԻՆ ՈՐԵՆՍԳՐԲԻ ԿԻՐԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1923 թ. սեպտեմբերի 23

Ի կառավարման Հայաստանի Խորհուրդների առաջին համագումարի փորձման և բանխորա-դյուցակական պետության անժըխտելի սեփականությունը կազմող հոգիք ուղիքով լեզանակները կանոնավոր, հաստատուն անսխառության պայմաններին հարմարեցրած ձևերով տպագրվելու նպատակով Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի 3-րդ նստաշրջանը փորձում է:

1. Հայաստանի Խորհուրդին Մայրաքաղաքի Հանրապետության Հոդալին Որենսդիրը բնագոյնի հաստատել և կիրարկության դնել 1923 թ. դեկտեմբերի 1-ին:

2. Սույն Որենսդիրը կիրարկության դնելու արդյունքում և թե՛ առաջ հրատարակված ու սույն Որենսդիրը մեջ մտած և թե՛ որան հաշվառող արևներին պորձադրվելու: Արդարադատության և Հոդալին Որենսդիրը Գործադիր Կոմիտեի խորհուրդական Կոմիտեի հանձնարարել հիշյալ արևներին ճշգրտելու կազմելու ու Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախադրությանն ի հաստատության ներկայացնելու:



3. Հողագործութեան ժողովրդական կոմիտարիատի վրա պարտականութիւն զնել ի հայտ բերել Հ. Ս. Խ. Հ. բոլոր պետական հողային դաշքերը, կազմել նրանց ինվենտարը և ներկայացնել Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահութեանն ի հաստատութիւն վոչ ուշ քան 1924 թ. սեպտեմբերի 1-ը: Միաժամանակ հանձնարարել Հողագործութեան ժողովրդական կոմիտարիատին վոչ ուշ քան մինչև 1924 թ. ամսագա սկիզբն ավարտել հողաշինարարական աշխատանքները:

4. Հանձնարարել Ներքին Գործերի և Հողագործութեան ժողովրդական կոմիտարիատներին մտալի ժամանակներում հարկավոր քանակութեամբ հող հատկացնել քաղաքներին:

5. Հանձնարարել կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահութեանը վորոշել Հայաստանի հանրապետութեան սահմաններում կատարվող գաղթի պայմաններն ու կարգը՝ Հողագործութեան ժողովրդական կոմիտարիատի առաջադրութեամբ:

6. Նկատել առնելով, զոր հողագործութեան և հողաշինարարութեան խնդիրները սերտ կերպով կապված են անտառային ֆոնդի ողտագործման պայմանների և կարգի հետ, պարտավորեցնել Հողագործութեան ժողովրդական կոմիտարիատին մշակել Անտառային Որենսդիրքը՝ ընդունելով այն իբրև շարունակութեան Հողային Որենսդիրքի՝ և առաջադրել ի հաստատութեան Հայաստանի կենտրոնական Գործադիր կոմիտեի հաջորդ նստաշրջանին:

7. Հողագործութեան ժողովրդական կոմիտարիատին իրավունք և վերադաճվում հողային որդանների աշխատանքները զեկավարելու նպատակով հրատարակել կանոններ, հրահանգներ և այլ վորոշումներ ու կարգադրութեաններ սույն Որենսդիրքի կիրարկութեան համար:

Կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահ՝

Ս. Համբարձումյան

Կենտրոնական Գործադիր կոմիտեի քարտուղար՝

Հ. Տաթևյան

Հրատ. «Խորհրդ. Հայաստ.»

1922 թ. սեպտեմբերի 29 № 216

Յեքեան

Հ. Ս. Խ. Հ.

ՀՈՂԱՅԻՆ ՈՐԵՆՍԳԻՐԳ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական առաջին համագործարի վերջումով, վոր հիմնված է բանվորների և գյուղացիների պարզ արտահայտած հեղափոխական կամքի վրա, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմաններում բեղմիշտ վերացվում է հողի, յերկրի ընդերքի, ջրի յեվ անտառի մասնավոր սեփականատիրության իրավունքը:

2. Հ. Ս. Խ. Հ. սահմաններում գտնվող բոլոր հողերը, ում տնորինության տակ էլ վոր լինեն, այսուհետև Բանվորա-Գյուղացիական պետության սեփականությունն են:

3. Գյուղատնտեսական նշանակութուն ունեցող, նույնպես և գյուղատնտեսական արտադրության համար հետագայում պիտանի բոլոր հողերը կազմում են պետական հողային միասնական ֆոնդ, վոր գտնվում է Հողագործության Ժողովրդական Կոմիտեիատի և նրա տեղական որդանների վարչության ներքո:

4. Պետական հողային միասնական ֆոնդի գյուղատնտեսական նշանակութուն ունեցող հողերի անմիջական ոգտագործության իրավունքը որինքով սահմանված հիմունքներով վերադասվում է ա) աշխատավոր հողագործներին ու նրանց միություններին, բ) քաղաքային բնակավայրերին և գ) պետական հիմնարկություններին ու ձեռնարկություններին: Վերոհիշյալ հողագտագործողների անմիջական ոգտագործության տակ չգտնվող հողերը յենթակա յեն Հողագործության Ժողովրդական Կոմիտեիատի անմիջական տնորինությանը և հատուկ վորջումների հիման վրա ու հատուկ պայմաններով պետության կողմից տրվում են հիմնարկություններին, կազմակերպություններին և առանձին անհատներին:

5. Աշխատավոր հողագործներին ու նրանց խմբակցություններին, քաղաքների ու քաղաքատիպ բնակավայրերի անմիջական ոգտագործության համար հողեր հատկացնելուց հետո պետական հողային միասնական ֆոնդի ամբողջ մնացորդը թողնվում է պետու-

թյան անմիջական տիրապետությանը և պետական հողային գույք
ե հանդիսանում:

6. Հողային որդանների կամ հողային հասարակությունների
տրամադրության տակ զանվոյ ազատ հողերի (պահեստի ու հոգ-
տագործած) ոգտագործության, ինչպես և այլ հողերը զանազան
հոգտագործողներին հատկացնելու հերթականության կարգն ու
պայմանները սահմանվում են հատուկ կանոններով, վոր հրատա-
րակելու յե Հողագործության ժողովրդական կոմիտարիատը՝ հաշվի
առնելով զատ-զատ շրջանների տեղական առանձնահատկություն-
ները:

7. Թե հողային հասարակությունների ոգտագործության տակ
զանվոյ և թե պետության կողմից այլ հոգտագործողների տրա-
մադրված հողերի վրա գյուղական տնտեսություն վարող բոլոր հոգ-
տագործողները յենթարկվում են հողային որդանների բնդհանուր
վերահսկողությանը և իրենց տրամադրված հողերը կանոնավոր
ոգտագործելու նկատմամբ պարտավորություններ ունին, վոր սահ-
մանվում են սույն Որենսդրքով և այլ որենքներով:

8. Հոգտագործողների և նրանց միությունների հողային
իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են
Հ. Ս. Խ Հ. բնդհանուր որենքներով, սույն Որենսդրքով, ինչպես
և ի զարգացումն սրա հրատարակելիք որենքներով ու կարգադրու-
թյուններով, իսկ հողային հասարակությունների համար նաև նրանց
կանոնադրությամբ (համախոսականով) ու տեղական սովորություն-
ներով, յերբ սրանց կիրարկությունը չե հակասում որենքին:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԱՇԽԵՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈԳՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Տ Վ Ա Ծ I.

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՈԳԻ ԻՐԱՎՈՒՆԷ

9. Գյուղական տնտեսություն վարելու համար հողից ոգտվե-
լու իրավունք ունին Հ. Ս. Խ Հ. բոլոր քաղաքացիները (առանց
սեռի, գաժանանքի ու ազգության խտրության), վոր ցանկանում
են մշակել հողն իրենց աշխատանքով: Աշխատավորական ոգտա-
գործման համար հող ստանալ ցանկացող քաղաքացիները հողաբա-

ժին են ստանում կամ հողային հասարակություններից, վորոնց կազմի մեջ մտնում են նրանք, կամ հողային որդաններից, յեթե արանց տրամադրության տակ աշխատավորական ոգտագործման համար նշանակված պահեստի հող կա:

10. Հողոգտագործողը հողի իրավունքը կարող է իրականացնել ա) հողային հասարակության կազմի մեջ, վերջինիս սահմանած հողոգտագործման կարգին յենթարկվելու պայմանով կամ բ) առանձին, առանց հողային հասարակության կազմի մեջ մտնելու:

11. Աշխատավորական ոգտագործման համար հատկացված հողի իրավունքը մշտական է և կարող է կարճվել միայն որենքում մատնանշված հիմունքներով:

12. Աշխատավորական ոգտագործման հողի իրավունքը ճանաչվում է հետևյալ ձևերով՝ Ա. մեկ կամ մի քանի տեղում ունեցած հողմասերի իրավունք (ագարակ, հողահատված, ցրված հողամասեր), Բ. հողային հասարակությունից բաժին ստացած հողի իրավունք և Գ. հողային հասարակության հոգերից միասնաբար սգավելու իրավունք:

13. Աշխատավորական ոգտագործման հողը վոչ գյուղական տնտեսության գրազմունքի ու արտադրության ծառայիցները կարելի է գավառական հողային որդանների թույլտվությամբ:

14. Աշխատավորական ոգտագործման նոր հողամասերի իրավունք սրվում է՝ Ա. հողային որդանների և Բ. հողային հասարակությունների կողմից:

15. Հողային մարմինների կողմից հողի հատկացումը տեղի է ունենում հողաշինարարության կանոնների հիման վրա (III մաս.), իսկ հողային հասարակությունների կողմից հողը սրվում է համաձայն նրանց հողային կանոնադրության կամ համախոտականով:

16. Տնտեսության առանձին անդամների ղինվորական ծառայության գնալու, զորաժողովի հետանքով զորակոչի յենթարկվելու, նաև խորհրդային և հասարակական ընտրովի պաշտոնի մտնելու գեղքում նրանց բաժին ընկնող հողամասը ծառայության ամբողջ ընթացքում մնում է իրենց տնտեսության արամադրության տակ: Տնտեսության անգամի ոյլ տեղ աշխատավորական վաստակի գնալու գեղքում նրա հողամասը վեց տարի մնում է ավյալ տնտեսության տրամադրության տակ: Այդ ժամանակաշրջանից հետո վերագարձողը բավարարվում է գյուղի պահեստի հոգերից,

խակ այգեգիւտին չլինելու դեպքում հողային հասարակութեան մյուս անդամների հետ համատար չափով հող եւ ստանում հետադաշում՝ հողերի առաջին խակ վերաբաժանութեան ժամանակ:

17. Աշխատավոր հողոգտագործողի հողի իրավունքը դադարում է, յերբ՝ Ա. ծխի բոլոր անդամները կամովին հրաժարվում են հողից. Բ. ծուխը դադարում է ինքնուրույն տնտեսութուն վարելուց. Գ. ծուխը հանդիմանում է, Դ. ծուխը վերջնականապես ուրիշ վայր եւ դադարում է դադարում եւ նախկին տեղում ինքնուրույն տնտեսութուն վարելուց, Ե. հողոգտագործողը որոնքում մասնանշված հանցանքների համար դատարանի վճռով զրկվում է հողից սկսովելու իրավունքից եւ Զ. հողը սահմանված կարգով գրավվում է պետական կամ հասարակական կարիքների համար (ճանապարհների, հողաբաժանության, հանքերի ոգտագործութեան եւ այլն):

18. Հողի իրավունքից կամովին հրաժարվելը տեղի է ունենում ծխի բոլոր անդամների համաձայնութեամբ եւ հայտարարութուն տալով այն հողային հասարակութեան, վորի մեջ եւ տնտեսութունը: Յեթե հողը գտնվում է հասարակութեան ոգտագործութեան սահմաններից դուրս, այդ դեպքում հայտարարութունը արվում է տեղական հողային սրգանին:

19. Տնտեսութունը դադարած է համարվում, յերբ հողոգտագործոյն փոշ պակաս քան յերեք տարի շարունակ առանց հարգելի պատճառի չի ոգտագործում հողը յուր տնտեսութեան կարիքների համար: Այս հիմունքով հողի իրավունքի կարճումը վորոշում են հողային հանձնաժողովները:

20. Գաղթ եւ համարվում, յերբ հողոգտագործողը յուր բնակավայրը փոխում է, նոր տեղում հատուկ կարգով հող եւ ստանում եւ դադարում է նախկին բնակավայրում տնտեսութուն վարելուց:

21. Հողաշինարարութեան ժամանակ, ընչպես եւ հողերի բարելավման, ճանապարհների կառուցման եւ պետական ու հասարակական աշխ կարիքների համար հողի գրավումը կատարվում է հատուկ կանոնների համաձայն (III մաս.):

22. Աշխատավորական ոգտագործութեան հողն ամբողջովին կամ նրա այն մասը, առանց վորի մնացած հողի հետագա ոգտագործումը տնտեսապես դժվարանում կամ աննպատակահարմար է դառնում, պետական ու հասարակական կարիքների համար սահմանված

կարգով գրավելու պեպքում փախարենք հող հատկացվում և ուրիշ տեղ՝ ընդհանուր հիմունքներով ու հողդատագործողի կրած վնասները հատուցանելով:

23. Հողդատագործողը դոյություն ունեցող սրենքների հիման վրա իրավունք ունի յուր հողամասի վրա Ա. հողի տնտեսական ոգտագործումը վարել յուր հայեցողությամբ ընտրած յեղանակով՝ ստորև հիշված սահմանափակումներով և Բ. կառուցանել, սարքել ու ոգտագործել հողի վրա տնտեսության և բնակչության պեպքերի համար շենքեր ու կառուցվածքներ: Հողդատագործողն իրավունք չունի յուր հողաբաժնի վրա այնպիսի գործողություններ կատարելու կամ այնպիսի կառուցվածքներ շինելու, փորսնք կարող են խախտել հարևան հողդատագործողների ետևան շահերը:

24. Հողդատագործողի ունենած հողամասի վրա գտնվող բոլոր կառուցվածքները, ցանքերն ու բույսերը և ընդհանրապես այն ամենը, ինչ կապված և հողամասի հետ, պատկանում են նրան:

25. Հողային հասարակությունների, նույնպես և առանձին հողդատագործողների հողային իրավունքները խախտվելու և տնտեսությանը միջամտելու սրենքով Հնախատեսանված բոլոր դեպքերում հողային հանձնաժողովը հողդատագործողի խնդրի համաձայն պարտավոր և, մինչև վեճն ըստ ետևյալ քննելը, վերականգնել խախտված հողդատագործումը կամ տնտեսությունը:

26. Հող գնելը, վաճառելը կամ նախավաճառելը, կտակելն ու գրավ գնելը արգելվում և և սույն արգելանքը խախտող գործարքները համարվում են անվավեր, իսկ զանցառուները քրեական կարգով պատժի յենթարկվելուց դատ, զրկվում են իրենց ոգտագործման տակ գտնվող հողից:

Հ Ա Տ Վ Ա Մ Ս

ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Աշխատավորական ոգտագործության հողի իրավունքների ժամանակավոր փախանցումը):

27. Աշխատավորական տնտեսություններն իրավունք ունին հետագա հողվածներում ժառանգված պայմաններով իրենց ոգտագործության տակ գտնված հողն ամբողջովին կամ մասամբ վարձու տալու դրամով, մթերքներով կամ այլ ձևի հատուցումով, յերբ տնտեսությունը ժամանակավորապես տկարացած և սարքերային

աղետի հետեանքով (անբերրիութիւն, հրդեհ, տնտեսական համա-
ճարակ և այլն), յերբ տնտեսութիւնն ինվէնտարի և աշխատավոր
ձեռքերի պակասութիւնն ունի, յերբ տնտեսութիւնը մահվան, գո-
րակոչի, խորհրդային և հասարակական ընտրովի պաշտոնի պա-
ճառով գրկված և աշխատավոր ձեռքից, յերբ տնտեսութիւնն աշխա-
տավոր ձեռքը ժամանակավորապէս բացակայում և աշխատավորա-
կան պատակի գնալու հետեանքով և այլն:

28. Հոգ վարձու տալը թույլատրվում է վաղ ավելի քան ժա-
մանակից, վոր պահանջվում է վարձած հողի վրա մեկ լրիվ սերմ-
նափոխութիւն կատարելու համար, իսկ կանոնավոր սերմնափոխու-
թիւնն բացակայութիւնն գեպքում վաղ ավելի յերեք տարուց:

29. Բացառիկ դեպքերում դաժառակային գործադիր կոմիտեյի
թույլտվութիւնով վարձակալութիւնն ժամանակը կարելի և հասցնել
մինչև յերկու սերմնափոխութիւնն տեւողութիւնը, իսկ կանոնավոր
սերմնափոխութիւնն բացակայութիւնն դեպքում վեց տարուց վաղ
ավելի: Յեթե այս պայմանաժամը լրանալուց հետո ևս վարձատուն
հնարաւորութիւնն չունենա ինքնուրույն տնտեսութիւնն վարելու,
այդ դեպքում նա կարող է հողը վարձու տալ միայն դաժառական
հողային որդանների թույլտվութիւնով, հակառակ դեպքում հողը
մուծվում է տեղական պահեստի ֆոնդի մեջ՝ տվյալ հասարակու-
թիւնն ուրիշ անդամների պահանջներին բավարարութիւնն տալու
համար:

30. Թույլատրվում է միայն աշխատավորական վարձակալու-
թիւնը: Վաղ վոք չէ կարող ոգտագործելու համար վարձակալու-
թիւնն պայմանագրով ստանալ ավելի հող, քան կարող է մշակել
յուր հողաբաժնի հետ միասին յուր տնտեսութիւնն ուժերով:

31. Վարձակալութիւնն պայմանագրով կամ լրացուցիչ համա-
ճայնութիւններն ուժի մեջ չեն մտնում համապատասխան գովա-
ռակի գործկոմում տամարագրվելուց հետո: Յեթե վործառնի ամ-
բողջ հողի կիսից պակասն և վարձու տրվում, տամարագրութիւնը
կատարվում է գյուղի խորհրդում: Տամարագրութիւնը կարող է
մերժվել միայն այն դեպքում, յերբ վարձակալութիւնն պայմաննե-
րը հակասում են որենքին:

32. Վարձակալութիւնն պայմանը կարելի է կնքել թե՛ գրավոր
և թե՛ բանավոր: Բանավոր պայման կողմերն անում չեն գովառակա-
յին գործադիր կոմիտեյի կամ գյուղական խորհրդի անդամի ներ-

կայութեամբ և պայծառն արձանագրուած և հողի վարձակալութեան տնտեսագրութեան մատչանում:

33. Հողը վարձու տալու իրավունք չունին այն ծխերը, փոքոնք վերջնականապէս տեղափոխվելու կամ այլ դործով պարապելու հետեւեալներով խալառ պաշարել յեն ինքնուրույն տնտեսութեան վարելուց:

34. Վարձակալութեան պայմանի համաձայն վարձկալը պարտավոր և տնտեսութեանը վարել ժրաջանութեամբ ու կանխատնտեսութեամբ: Նա իրավունք չունի այդ հողը իր կողմից ուրիշին վարձու տալու: Հողը վարձու տվողի տնտեսութեան վրա ընկնող հարկերը, տուրքերը և պարտավորութեանները պայմանագրի ժամանակաշրջանում վճարում և վարձկալը՝ վարձած հողի տարածութեան համեմատ:

Մանրութիւն. — Պայմանագրի մեջ անպատճառ պիտի վորոշվեն այն բարեկալութիւնները, փոք վարձկալը պարտավոր և կատարել, նաև վարձատվին հատուցումն տալու յեղանակներն ու պայմանները, յեթե հիշյալ բարեկալութիւնները տնտեսապէս լիովին չոգտագործվին:

35. Վարձատվի կամ հողային որդանների պահանջով պայմանագիրը կարելի և պայմանաժամից առաջ լուծել, յեթե վարձկալը չկատարի նախորդ հոգաժողով մատնանշված պահանջները կամ խախտի պայմանագիրը: Այսպիսի դեպքերում պայմանագրի լուծումը և նրանից բխող ստացվածային հետեանքները վարձատվի համար սահմանվում յեն հողային վեճերի քննութեան կարգով:

36. Պայմանագրի ժամանակամիջոցը լրանալուց հետո հողատուը վարձկալի կողմից կատարված և տնտեսութեան պլանտեսութեան համար առանց վնասի հողիցն անբաժանելի բոլոր բարեկալութիւններով հանդերձ վերադարձվում և վարձատվին, և այս դեպքում վարձակալութեան վերաբերյալ փոխադարձ հաշիւտեսութեանը, ինչպէս և չոգտագործված բարեկալութիւնների համար հատուցումը կատարվում և հիմնական կամ լրացուցիչ ձևով կնքված պայմանագրի համաձայն:

37. Վարձակալութեան պայմանների և կանոնների ճիշտ կիրարկութեան հսկողութեանը, այլ և վարձակալութեան պայմանագրերից բխող վեճերի քննութեանը կատարվում և հողային հանձնաժողովներում հողային վեճեր քննելու կարգով, իսկ ստրկացու-

ցիշ բնույթ ունեցող պայմանագրերի լուծումը կատարվում է դատարանի միջոցով:

ՀԱՏՎԱԾ III

ՈՒՍՈՒՄԱԿ ՎԱՐՁՈՒ ԱՌԽԱՏԱՆԲԸ ԱՌԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՁ

38. Վարձու աշխատանքը հողագործական աշխատավոր տնտեսությունների մեջ թույլատրելի է այն դեպքերում, յերբ տնտեսությունը աշխատավոր ձեռքի կամ ինվենտարի պահասության պատճառով չի կարող ժամանակին կատարել անհրաժեշտ գյուղատնտեսական աշխատանքները:

39. Վարձու աշխատանքը կարող է թույլատրվել միայն այն պայմանով, վոր այն կիրարկող տնտեսություններն իրենց աշխատավորական կազմն անպայման պահպանեն, այսինքն յեթե տնտեսության բոլոր աշխատունակ անդամները վարձու քանվորներին հավասար ժամանակցեն տնտեսության աշխատանքներին:

40. Վարձու աշխատանքը թույլատրվում է այն պայմանով, վոր նրա կիրարկության բոլոր դեպքերում պահպանվեն գյուղական տնտեսության աշխատանքի պաշտպանության ու կարգավորման վերաբերյալ որենքներն ու կարգադրությունները:

Ծանոթություն.—Աշխատավորական հողագործական տնտեսությունների մեջ վարձու աշխատանքի կիրարկությանը հետևելու և վերահսկելու կանոնները սահմանվում են Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից՝ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի և Արհեստակցական Միությունների Խորհրդի համաձայնությամբ:

ՀԱՏՎԱԾ IV

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(Հողոգտագործողների հասարակություն)

ԳԼՈՒԽ Ա.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

41. Բացի գոյություն ունեցողներից, հողային հասարակություն են համարվում գյուղատնտեսական կոմունաներն ու արտել-

ները, այլև նախկին հասարակութիւններից զտուած առանձին ծր-
խերի կամովին կազմակերպուած միութիւնները կամ խմբակցու-
թիւնները:

Ծանոթութիւն. 1. Հողային հասարակութեան և գյուղական
միավորի վարչական սահմանները կարող են և նույնը
չլինել:

2. Գյուղատնտեսական կոլլեկտիւիւները հողային հասարա-
կութիւն են համարուում այն դեպքում միայն, յերբ նրանք
բաղկացած են 15-ից փոշ պակաս չափահաս աշխատավոր հո-
ղագործներից:

42. Հանդի ընդհանուր ոգտագործութիւն ունեցող ծխերի խմ-
բակցութիւնը միշտ համարվում է մի հողային հասարակութիւն:

Ծանոթութիւն.— Մի քանի գյուղերի մասերը, փոք-
միկնույն գյուղերի մյուս մասերիցն առանձին ընդհանուր հանդ-
ուկին, համարվում են ինքնուրույն հողային հասարակութիւն:

43. Յեթե հողի ոժտնդակ տեսքից (խոտհարք, արոտատեղ և
այլն) միասին ոգտվում են այնպիսի ծխեր, փոք իրենց վարելա-
հողերի կողմից տարբեր հողային հասարակութիւնների կազմի մեջ
են մտնում, այդ դեպքում ծխերի նման խմբակցութիւնը ընդհա-
նուր հողերի նկատմամբ համարվում է ուրույն հողային հա-
սարակութիւն:

44. Մի քանի հողային հասարակութիւններ փոխադարձ
համաձայնութեամբ կարող են միանալ, հողային մի հասարակութիւն
կամ հասարակութիւնների միութիւն կազմել՝ հողագտագործման
առանձին կողմերը հասարակական դարձնելու, այլ և միացյալ ուժե-
րով գյուղատնտեսական փորձ գործեր գլուխ բերելու համար:

45. Հասարակութեան հողերից ոգտվելու իրավունքով դրսից
նոր հողագուրկ ծխերի մուտքը հասարակութեան մեջ թույլ է տրը-
վում միմիայն իրեն՝ հասարակութեան համաձայնութեամբ, բայց
հողային որդանների կարգադրութեամբ թույլ է տրվում նոր ծխեր
լրացուցիչ կերպով բնակեցնել այն հասարակութիւնների մեջ, փո-
սահմանված կարգով ճանաչված են իբրև ազատ հողեր ունեցող
հողային հասարակութիւններ:

46. Հողային հասարակութեան անդամ համարվում են նրա
կազմի մեջ մտնող ծխերի բոլոր անդամները, սեռից ու հասակից
անկախ, նաև կոլլեկտիւիւների (կոմմունաների ու արտելների) անդամ-

ները, իսկ հասարակութեան իրավագոր անդամ համարվում են, անկախ սեռից 18 տարին լրացրած անձինք, այլ և ինքնուրույն անտեսութուն վարող տան գլուխները, յեթե նրանք նույնիսկ փոքր են այդ հասակից:

47. Հողային հասարակութեան մեջ հողի տարրեր տեսքի ող-տագործութեան կարգը և բոլոր հողային ու հող-անտեսական գոր-ծերի վերաբերյալ կանոնները սահմանվում են հասարակութեան կանոնադրութեամբ կամ համապատասխան համախոսականներով՝ որենքի պահանջները կատարելու պայմանով:

48. Նոր կազմակերպվող յուրաքանչյուր հողային հասարակութուն յուր գոյութիւնն սկսում է տոմարագրվելու պահից: Գոյութիւն ունեցող հողային հասարակութիւնները և նրանց կրած բոլոր փոփոխութիւնները պետք է տոմարագրվեն սահմանված կարգով:

Ծանոթութիւն.—Տոմարագրութեան պայմանաժամն ու կանոնները սահմանում է Հողագործութեան Ժողովրդական Կոմիտարիատը:

ԳԼՈՒԽ Բ.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԸՌԱՎԵՐՈՂ ՈՐԳԱՆՆԵՐԸ

49. Հողային հասարակութեան գործերը վարում են հասարակութեան իրավագոր անդամների ընդհանուր ժողովը, նաև նրա ընտրած որգանները:

Ծանոթութիւն.—Գյուղական խորհրդի հետ նույն սահմաններն ունեցող հողային հասարակութիւնների մեջ վերջիններիս ընտրական որգանների պարտավորութիւնները կատարում է գյուղական խորհուրդը, իսկ այլ հողային հասարակութիւնների մեջ՝ հասարակութեան անդամների ընդհանուր ժողովի կողմից հողային գործերի համար ընտրված հատուկ լիազորները:

50. Ընդհանուր ժողովը լուծում է ամբողջովին հողային հասարակութեանը վերաբերվող բոլոր հարցերը, այն է.—

ա. Սահմանում և փոփոխում է հասարակութեան հողերի տար-քեր տեսքերի ողտագործութեան կարգը:

բ. Կազմում է հողային կանոնադրութիւն և հարկ յեղած դեպ-քում փոփոխում ու լրացնում է այն:

գ. Վճռում է զբաղեցնել հողագտագործողների հասարակութ-
յան անդամագրվելու և նրա կազմից հողով զատվելու դիմում-
ները:

դ. Վերոշումն է ապրիս հողաշինարարության, լայնադաշտ մը-
շակության անցնելու, ագարակներ և հողահատվածներ կազմելու,
հասարակության մասերի մեջ հողերը բաժանելու և այլ խնդիր-
ների մասին:

ե. Հողի ոգտագործման սահմանված կարգի համաձայն կա-
տարում է հողի վերաբաժանություն և հողաբաշխություն:

զ. Ցրված հողամասերով հողագտագործման դեպքում վերո-
շում է ընդհանուր սերմնավիճակության, ընդհանուր արտաի և այլ
հարցերը:

ե. Տնորինում է ընդհանուր ոգտագործության տակ գտնվող
հողատեսքերի և ազատ հողամասերի մասին:

և. Ընտրում է լիազորներ (նախորդ հոգվածի ծանոթության
համաձայն) և սահմանում նրանց վրա հսկելու կարգը:

51. Հասարակության ընդհանուր ժողովին (53 հոդ.) մաս-
նակցում են նրա կազմի մեջ մտնող առանց սեռի խտրության
բոլոր հողագտագործողները, վերանց տարիքը 18-ից պակաս չե-
նա և իրքնուրույն տնտեսություն վարող տան գլուխները, յեթե
նույնիսկ նրանք վորք են այդ հասակից:

52. Ընդհանուր ժողովը համարվում է որինական, յերբ ներ-
կա յեն հասարակության ծխերի վոչ պակաս քան կիսի տան գը-
լուխները կամ նրանց ներկայացուցիչները: Հողագտագործման կար-
գը սահմանելու կամ փոփոխելու վերաբերյալ գործերի համար ընդ-
հանուր ժողովն որինական է, յերբ ներկա յեն ծխերի վոչ պա-
կաս քան յերկու յերրորդական մասի ներկայացուցիչները և վոչ
պակաս քան հասարակության բոլոր իրավազոր անդամների կեսը:
Այն հասարակություններում, վոր բաղկացած են առանձին ծխեր չը-
կազմող հողագտագործողներից (կոմսուններ և արտելներ), ընդ-
հանուր ժողովների որինականության համար առաջին դեպ-
քում պահանջվում է յեղած բոլով իրավազոր հողագտագործողների
կիսի, իսկ յերկրորդ դեպքում՝ յերկու յերրորդականի ներկայու-
թյունը:

53. Հողագտագործման կարգ սահմանելու կամ փոփոխելու
վերաբերյալ գործերը ընդհանուր ժողովում վճռվում են ժողովին:

ներկա յեղող անդամների ձայների յերկու յերրորդական մեծամասնությամբ, իսկ մնացած գործերը ձայների պարզ մեծամասնությամբ: Ընդհանուր ժողովին մասնակցողներից յուրաքանչյուրն ունի միայն մեկ ձայնի իրավունք:

54. Հասարակության ընդհանուր ժողովն ու հողային որդանները հողային գործերը քննելիս ղեկավարվում են սույն Որենագրքով և գործող այլ որենքներով, ինչպես նաև հասարակության ընդունած կանոնադրությամբ կամ համախոսականներով ու տեղական սովորություններով, յեթե վերջինները չեն հակասում որենքին:

Շանդթուրյուն.—Հողային հասարակությունների կողմից որենքի ճիշտ կիրարկության հսկելը հանձնարարվում և զավառակային գործադիր կոմիտեներին:

55. Հասարակության ընդհանուր ժողովի յուրաքանչյուր փոքրում պետք է մուծվի արձանագրության (համախոսականի) մեջ, փորտեղ ցույց պիտի տրվի նրա կազմելու ժամանակը, տեղը, համաձայն ու անհամաձայն ժողովականների թիվն ու գործի վերաբերյալ կարեւոր այլ հանգամանքները: Արձանագրությունը (համախոսական) ուժի մեջ է մտնում ժողովի նախագահի, քարտուղարի և ներկա գտնող հողոգտագործողների մեծամասնության կողմից ստորագրելուց հետո միայն:

56. Հողային հասարակությունը պետության առաջ պատասխանատու յե յուր ոգտագործության տակ գտնվող հողի կանոնավոր և նպատակահարմար ոգտագործման համար:

Գ Լ ՈՒ Խ Գ.

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Յուրաքանչյուր հողային հասարակություն իրավունք ունի պահելու կամ յուր իրավագոր անդամների ձայների մեծամասնության փորոշմամբ (52-53 հոդվածների կարգով) ընտրելու հողոգտագործման յուր ուզած յեղանակը:

58. Յեթե հողոգտագործողն առանց հարգելի պատճառի հողը թողնի տնտեսապես չոգտագործված կամ այն վաճռու տա խախտելով ոքենքը, այդ գեպքում հողային հասարակությունը ժամա-

Նաեկափորագես, վոչ ավելի մի սերմնափոխութեան տեւողութեանից, կարող ե զրկել նրան այդ հոգն ոգտագործելու իրավունքից: Այսպիսի դեպքում ծագած վեճերը շահագրգռված հողոգտագործողներին բողոքի հետեանքով քննութեան են առնում հողային հանձնաժողովները:

59. Հողի վրա անխնա կերպով ու հողն ուժասպառ անող տեսեսութեան վարող հողոգտագործողներին հողային հասարակութեան միջնորդութեամբ կամ հողային որդանների նախաձեռնութեամբ, հողային վեճերի քննութեան համար սահմանված կարգով, վոչ ավելի քան մեկ սերմնափոխութեան ժամանակով կարելի ե հողից զրկել, առանց նոր հող հատկացնելու իրավունքի:

60. Հասարակութեան անդամների լքյալ, սույն Որենսգրքում մատնանշված դեպքերում խլված, նաե հողաբաժնից հրաժարված կամ դատական կարգով նրանից զրկված անդամների հաղամասերն ու հողաբաժինները անցնում յեն հողային հասարակութեաններին տնօրինութեանը:

61. Հողային հասարակութեաններին սահմանների մեջ մտնող ընդհանուր ոգտագործութեան տակ յեղած (չբաշխված) հողերը՝ արոտատեղերը, ճանապարհները, ջրերը, անհարմար հողերը և այլն՝ գտնվում յեն հասարակութեան անմիջական տնօրինութեան տակ:

62. Հողային հասարակութեանը յուր անունով կարող ե կայք ձեռք բերել, պայտանագրեր կնքել, դատ սկսել և պատասխանատու լինել դատարանում, նաե միջնորդութեաններ հարուցանել այլ հիմնարկութեանների առաջ:

Հ Ա Տ Վ Ա Մ 5.

Ծ Ո Ւ Խ

(ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ)

Գ Լ ՈՒ Խ Ա.

Ժ Խ Ի Կ Ա Ձ Մ Ը.

63. Միատեղ գյուղական տնտեսութեան վարող անձերի ընտանեկան-աշխատավորական միութեանը համարվում ե ծուխ: Ծուխը կարող ե նաե բաղկացած լինել ընտանիք չունեցող մեկ անձից (առանց սեւի խտրութեան):

64. Ծխի անդամ են համարվում թե նրա բոլոր ներկա մասնակցողները (հաշվելով մանկահասակներին և զառամյալ ծերերին) և թե ժամանակավորապես աշխատավորական վատակի գնացածներն ու ծխի կազմից որինական կարգով չհեռացածները: Ծխի կազմը մեծանում և ամուսնության և ծխի մեջ նոր անդամներ ընդունելու, իսկ փոքրանում՝ անդամներին նրա կազմից դուրս գալու կամ մահացության դեպքում:

Մանրորոտն. — Ամուսնության և նոր անդամների ընդունելության հետևանքով ծխի կազմի մեջ ընդունված անձերն իրավունք են ստանում նույն ծխի հետ միասին ընդհանուր հիմունքներով ոգտվելու ընդհանուր ոգտագործության հողերից ու գույքից և զբղվում մի ուրիշ ծխի հետ հողերից ոգտվելու իրավունքից:

65. Ծխի (անտեսության) աշխատավորական ոգտագործման տակ գտնվող հողերի, շենքերի ու դյուղատնտեսական ինվենտարի իրավունքը պատկանում է նրա ամբողջ կազմի բոլոր անդամներին, առանց սեռի ու հասակի խտրության:

66. Ծխի անտեսական գործերի մեջ նրա ներկայացուցիչ համարվում է տան գլուխը (տղամարդ կամ կին):

67. Անփութ կառավարելու հետևանքով ծխի անտեսությունը գեպի քայքայումը տանելու դեպքում նրա անդամների գիմումի ու գյուղական խորհրդի յեղրակացության հիման վրա, գավառի գործադիր կոմիտեն կարող է տան գլխի փոխարեն նշանակել նույն ծխի պատկանող մի այլ անձի:

68. Յեթե ծխի մեջ միան միայն նրա անչափահաս անդամները, այդ դեպքում գյուղական խորհուրդը նրանց վրա խնամակալ է կարգում՝ խնամակալության վերաբերյալ որենքի հիման վրա:

69. Ծխի գույքը չէ կարող դատավճռով հատկացվել նրա առանձին անդամների (փորոնց թվում նաև տան գլխի) անձնական կարիքների համար արված պարտքերի վճարմանը:

70. Յուրաքանչյուր ծուխ, նաև նրա կազմի փոփոխությունները, գյուղական խորհուրդը տսմարագրում է ծխամատյանի մեջ, անուն-անուն ցուցակագրելով ծխի բոլոր անդամներին և տան գլխին: Տոմարագրության մերժման դեմ գանգատ կարելի է տալ 14 օրվա ընթացքում գավառակային հողային հանձնաժողովին:

Գ Լ ՈՒ Մ Բ.

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂԱՎՈՐԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԺԻՆ-
ՐԻ) ԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ.

71. Աշխատավորական հողագործական տնտեսութեան (ծխի) բաժանութիւնն այն է, վոր ամբողջ ծխի ընդհանուր ոգտագործութեան տակ գտնվող հողի տեսքերը և գույքը անշատ ոգտագործման համար բաշխվում է ծխի անդամներին միջև (առանց սեռի և հասակի խտրութեան):

72. Հողի տեսքերը թույլ է տրվում բաժանել այն նպատակով ու պայմանով, վոր գատված հողամասերի վրա ծխից բաժանվող անդամների համար հնարավոր լինի կազմակերպել նոր հողագործական տնտեսութիւն, իսկ այլ դեպքերում կարող է տեղի ունենալ միայն ծխի ստացվածքի բաշխումն:

73. Ծխի բաժանութիւնը պահանջելու իրավունք չունին 18 տարին չլրացրած անձերը, նաև նրանք, ովքեր վեց տարի շարունակ իրենց աշխատանքով կամ միջոցներով չեն մասնակցել ծխի ընդհանուր տնտեսութիւնը վարելու գործին:

Ծանոթութիւն.— Այս հոդվածի ուշօր չի տարածվում այն անձերի վրա, վորոնք տնտեսութեան աշխատանքներին չեն մասնակցում դինվորագրութեան, գործաժողովի, պետական ընտրովի պաշտոնի կոչվելու, հիվանդութեան կամ գալուցներում ուսանելու պատճառով:

74. Հողերն ու գույքը բաժանվում են այնպես, ինչպես վոր էր, սակայն գույքի նկատմամբ (բայց վնչ հողի) թույլ է տրվում տարբեր առարկաների փոխաշվարկութիւն, ինչպես և հասանելիք բաժինների համարժեքի հատուցումը դրանով կամ միջերբներով:

75. Բաժանութեան յենթակա յե միայն ընդհանուր ոգտագործման գույքը և ծխի առանձին անդամների պահանջի համաձայն բաժանութիւնից դուրս են հանվում նրանց անձնական գործածութեան առարկաները, վորոնց սեփական միջոցներով ձեռք բերված լինելը նրանք կապացուցանեն, նաև այն գույքը, վոր ըստ տեղական սովորույթների համարվում է ծխի առանձին անդամների անձնական պատկանելիքը:

76. Բաժանութեան յուր քանչուր դեպքում բաժանվողները տոմարագրութեան համար ներդրայցնում յեն գավառակային գոր-



ծաղիւր կոմիտեյին բաժանագիր, վորի մեջ հիշատակված պետք և լինի՝ Ա. յերբ և ծխի վոր անդամների մեջ և համաձայնություն տեղի ունեցել բաժանության մասին, Բ. վորտեղ և ինչ հողամասեր են բաժանվում (տեխակը, տարածությունն ու գիրքը) և ինչպես են նրանք բաշխվում համաձայնվող կողմերի մեջ Գ. ինչ գույք և բաժանվում և ինչպես և այն բաշխվում, Դ. բաժանության իրականացման պայմանաժամն ու կարգը, Ե. համաձայնություն կնքողների ցանկացած և որեւքին չհակասող այլ պայմանները և Զ. համաձայնություն կնքողների ստորագրությունները:

77. Գավառակային գործադիր կոմիտեն կարող է մերժել բաժանագրի տոմարադրությունը միայն այն դեպքում, յերբ բաժանության պայմանները հակասում են որեւքին: Տոմարադրության մերժման դեմ գտնդատ կարելի է տալ գավառական հողային հանձնաժողովին 14 օրվա ընթացքում:

78. Բաժանվողները ծխի բաժանության նկատմամբ համաձայնության չգալու դեպքում, բաժանության պահանջն ուղղում են գավառակի հողային հանձնաժողովին: Այս դեպքում գավառակային գործադիր կոմիտեն տոմարադրությունը կատարում է հողային հանձնաժողովներում գործի վերջնական լուծումն ստանալուց և նրանց վորոշումներն որինական ույժի մեջ մանելուց հետո միայն:

79. Յեթե հողերի հետ միասին պահանջվում է նաև ծխի գույքի բաժանություն, այդ դեպքում ծագած վեճերն ամբողջովին յենթակա յեն հողային հանձնաժողովների քննությանը, իսկ միայն գույքի բաժանության վերաբերյալ վեճերը լուծում է ժողովրդական դատարանը:

80. Աշխատավորական տնտեսությունների հողի բաժանության վերաբարյալ վեճերը քննելին գավառակային հողային հանձնաժողովներն ամենից առաջ պիտի պարզեն տնտեսության բաժանվող ցանկացող անդամներին հողային հասարակության ու տեղական հողադատների որավադրության տակ գտնվող չդատադրածվող հողերի վրա տեղավորելու հնարավորությունը, և միայն այդ անելու անկարելիության դեպքում կարող է տեղի ունենալ տնտեսության հողերի բաժանումը:

81. Բաժանության հետեանքով կազմակերպվող նոր ծախս իրավունք սնի հողային հասարակություններէց պահանջելու, վոր պահետի ազատ հողերից իրեն հողաբաժին հատկացվի բնակարանի

ու տնտեսութեան կարիքներին ծառայող շենքերի կառուցման համար, յեթե նախկին ծխի տնտեսողից նրան բավարար բաժին չե հանված:

82. Համայնական կարգով հողոգտագործութիւն վարող հասարակութիւնների մեջ հողեր բաժանելիս, ծխից բաժանվող անդամների բաժինները վորոշվում են բաշխման սխալներին համեմատ, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ ընդունված սովորույթի համաձայն, յեթե վերջինս չե հակասում որոշին: Բաժանութեան բոլոր դեպքերում ծխի արական և իգական սեռի անդամները հավասար իրավունքներ են վայելում:

Մանրութիւն. — Գավառական գործադիր կոմիտեներին արվում ե իրավունք հողբաժինների միջնորդութեամբ ու Հողփողկոմատի հաստատութեամբ հրատարակել ծխերի բաժանութեան վերաբերյալ տեղական պայմաններին համապատասխան կանոններ՝ հողային հանձնաժողովների միւրինակ ղեկավարութեան համար:

Գ Լ ՈՒՆ Գ.

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԾԽԵՐԸ) ՄԱՆՐԱՅՆԵԼՈՒ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

83. Կանգուն տնտեսութիւնները շատ մանր մասերի վերածող, չափազանց թուլացնող ու քայքայող բաժանութիւնները կանխելու նպատակով, գավառական գործադիր կոմիտեներին արվում ե իրավունք գավառական հողբաժինների միջնորդութեամբ ու Հողփողկոմատի հաստատութեամբ հրատարակել պարտադիր վորոշումներ տնտեսութիւնները մանրացնելու սահմանափակման մասին: Անմասնատելի հողբաժինների նորման նախորոջ սահմանում ե Հողփողկոմատը:

84. Անմասնատելի հողբաժինների համար սահմանված նորմաները պարտադիր են բոլոր ագարակային և հատվածային տնտեսութիւնների համար, վորոնց սահմանված նորմայից ավելի մանրացումը արգելվում ե: Իսկ համայնական ու ցրված հողամասերի կարգով հողոգտագործումն ունեցող տնտեսութիւնների անմասնատելի լինելը կարող են սահմանել թե ամբողջ հասարակութիւնը և թե առանձին ծխերը կամավոր կերպով ու նախորդ հողվածների մտանանշած պայմանների համաձայն:

85. Ամբողջ հասարակութեան համար տնտեսութեանները կա-
մալոր կերպով անմասնատելի հայտարարելը կատարվում է ծխերի
իրավագոր անդամների յերկու յերրորդականի վորոշումով: Այս
գեպքում անպայման սահմանվում է անմասնատելութեան նվազա-
գույն ժամանակամիջոցը (վոչ պակաս մեկ սերմնափոխութեան
տնվողութեանից, իսկ յեթե այդ չկա, վոչ պակաս յերեք տարուց):
Առանձին ծխերի նկատմամբ այդ բանն անելու համար պահանջ-
վում է բոլոր իրավագոր անդամների համաձայնութեանը: Կայացած
համաձայնութեանն ուժի մեջ է մտնում գավառակային գործադիր
կոմիտեյում սահմանված կարգով այն տոմարազրելուց հետո: Հո-
ղոգտադործման համայնական կարգ ունեցող հասարակութեանների
մեջ տնտեսութեանների անմասնատելութեան մասին կայացած
համաձայնութեանը արգելք չի հանդիսանում հասարակութեան հա-
մար հողերի վերաբաժանութեան կատարելու և այդ դեպքում փո-
փոխելու անմասնատելի տնտեսութեանների (ծխերի) հողաբաժին-
ների տարածութեանը:

86. Անմասնատելի հայտարարված տնտեսութեաններից գառ-
վելու դեպքում նրա կազմից դուրս յեկող անդամն իրավունք ունի
իրեն հասանելիք բաժնի դիմաց հատուցումն պահանջելու ծխի գույ-
քից (վոչ հողերից) դրամով կամ նյութեղենով: Համաձայնութեան
չկայանալու դեպքում հատուցման չափը վորոշում են հողային
հանձնաժողովները, օակայն հատուցումը չե կարող ավելի լինել ծխի
տնտեսական սարք ու կարգի մի յերրորդական արժեքից: Մնացող
ծխի պահանջի համաձայն դրամական և պարենային վճարումնե-
րը առանց տոկոսների հավելումների կարող յեն տեղի ունենալ
մաս-մաս՝ վոչ ավելի քան հինգ տարվա ընթացքում:

87. Գավառակային գործադիր կոմիտեներում սահմանված
կարգով չտոմարագրված բաժանութեանները որինական ուժ չունեն-
նման դեպքերում իրենց հողերն ու գույքը բաժանած ծխերը ճանաչ-
վում յեն միասնական թե հողաշինարարութեան ու հողերի վերա-
բաժանութեան ժամանակ և թե տնտեսութեան վրա ընկնող բո-
լոր հարկերի, տուրքերի և այլ պարտավորութեանների դանձման
դեպքերում:

Հ Ա Տ Գ Ա Մ Ե.

ԱՅԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆԻՔՆԵՐ

88. Հողային հասարակության մեջ հողոգտագործման յեղանակը կարող է լինել՝ Ա. համայնական (յերբ հողի հավասարաբար վերաբաժանություններ են տեղի ունենում ծխերի միջև), Բ. առանձնական (յերբ ծուխը անփոփոխ տարծությամբ հող ունենալու իրավունք ունի՝ ցրված, հատվածային կամ ագարակային հողամասերի ձևով) և Գ. ընկերական (յերբ միատեղ հողն ոգտագործում են հասարակության անդամները, վոր գյուղատնտեսական կոմսունա ու առտել և կամ հողի հասարակական մշակության համար ընկերություններ են կազմում):

Ծանոթություն.—Հողային հասարակությունը հողի աարքեր տեսքի համար կարող է սահմանել հողոգտագործման տարքեր կարգեր (հողոգտագործման խառն ձևեր), բայց հիմնական համարվում է այն կարգը, վոր սահմանվում է տնտեսության հողերի հիմնական տեսքի համար:

89. Հողային հասարակության հողոգտագործման կարգը փոխելու դեպքում, այդ փոփոխությանն անհամաձայն անդամները կարող են պահել նախկին կարգը՝ հողերի զատման մասին սահմանված կանոնների համաձայն առանձնացնելով իրենց հողերը մեկ տեղում:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՅՆՈՒԿԱՆ ԿԱՐԳԸ.

90. Համայնական կարգի հողոգտագործման դեպքում, հասարակության յուրականչուր ծուխ իրավունք ունի հասարակության հողաբաժիններից ստանալու յուր մասը, վոր կարող է փոփոխվել՝ հասարակության բոլոր անդամների մեջ հողերի հավասարաբար բաշխումն կատարելու նպատակով:

91. Համայնական կարգով հողոգտագործումն ունեցող հասարակությունների մեջ հողի հավասարաբար բաշխումը կատարվում է

ընդհանուր վերաբաժանութեան կամ առանձին ծխերի հոգաբաժինների հավելման ու կրճատման միջոցով:

Ծանոթութիւն.— Հոգաբաժինների հավելման ու կրճատման գործողութիւնը, շահագրգռված տնտեսութեանների անհամաձայնութեան պնդում, կարող է կատարվել վոչ հաճախ մեկ անգամ տնտեսութեան տեղից, այն էս անպայման նոր տնտեսութեան սկզբին:

92. Հողի համաարար բաշխման որոշումը պահանջներին համապատասխանող ընդհանուր կանոնները սահմանում է հասարակութիւնը յուր հողային կանոնադրութեան (համախոսականի) մեջ, վորտեղ պետք է վորոշված լինին թե՛ Ա. հասարակութեան ունեցած հողի վոր տեսքը (վարելահող, խոտհարք և այլն) կարող է բաշխման յենթարկվել, Բ. ինչ միավորների վրա (շնչի, աշխատավոր ձեռքի և այլն) և ինչ ձևով են (տարածութեամբ, բերքով և այլն) բաժանվելու հողի տեսքերը Գ. քանի տարին մի անգամ է կատարվելու վերաբաժանութիւնը և Դ. ինչպես պիտի ոգտագործվեն հողի ընդհանրութեան ոգտագործմանը թողնված տեսքերը:

93. Գալուսի կամ նրա զանազան մասերի համար բաշխման միավորները տնտեսութեան տեղական պայմանների ու յեղանակների համեմատ կարող են սահմանել դավառական գործադիր կոմիտեները՝ դավառական հողբաժինների առաջադրութեամբ ու Հող-ժողկոմատի հաստատութեամբ: Մինչև այդպիսի վորոշումներ հրատարակվելը, համաարար հոգաբաժանութեան դեպքում բաշխման միավորը սահմանում է հողային հասարակութիւնը, և դավառական գործկոմի հրատարակած պարտադիր վորոշումը բաշխման միավորների մասին հատարակութիւնը չե պարտավորեցնում ժամանակից առաջ հոգաբաժանութիւն կամ հողերի համաարեցում կատարել, յեթե այդ առաջ կատարված է հասարակութեան սահմանած միավորների հիման վրա:

Գ Լ Ո Ւ Ն Գ.

ՀՈՂՈՐԾԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

94. Առանձնական կարգի հողոգտագործման ժամանակ հատարակութեան կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ծխի իրավունք է վերապահվում ունենալ հողի անփոփոխ տարածութիւն՝ ցրված, հատվածային կամ ագարակային հողամասերի ձևով:

95. Առանձնական - ջրված հողամասերով հողագտագործության ղեկավարում հողագտագործողի միանման տեսքի հողակտորներն ընկնում յեն հասարակության հողամասերի զանազան տեղերում, ուրիշ հողագտագործողների հողամասերի հետ մեջ ընդ մեջ:

96. Հատվածային հողագտագործման ղեկավարում հողագտագործողի ամբողջ հողաբաժինը կամ հողի միանման տեսքը (որինակ վարելահող) գտնվում է մեկ տեղում: Տնատեղը արվում է բոլորի հետ միասին ընդհանուր գյուղատեղում:

97. Ագարակային հողագտագործման ղեկավարում հողագտագործողի տնատեղը գտնվում է նրա հողամասում, վր արվում է նրան մի տեղում հողի հիմնական տեսքերից:

98. Առանձնական կարգով հողագտագործումը ճանաչվում է այն հասարակությունների մեջ, վորտեղ հողի հիմնական տեսքերի նկատմամբ այդ կարգը սահմանված է յեղել հողաշինարարության ակտերով կամ հասարակության իսկ համախոսականներով և հետագայում որինական կարգով փոփոխության չի յենթարկվել:

99. Առանձնական հողագտագործման կարգը նոր սահմանելու ղեկավարում հողային հասարակության վորոշումներով (համախոսականներով) յուրաքանչյուր ծխի հողագտագործության հողերի տարածությունը վորոշվում է ընդհանուր հիմունքներով, իսկ այն հասարակությունների մեջ, վորտեղ հողագտագործման առանձնական կարգն արդեն գոյություն ունի, յուրաքանչյուր ծխի հողաբաժնի չափը վորոշվում է նրա անվիճելի փաստացի աշխատավորական ոգտագործման համեմատ: Այս առթիվ վեճ լինելու դեպքում հարցը լուծում են հողային հանձնաժողովները պատշաճ փաստաթղթերի և ուրիշ ապացույցների (վկաների ցուցմունքներ և այլն) հիման վրա:

100. Ցրված հողամասերով առանձնական կարգի հողագտագործման ղեկավարում, գատ-գատ ծխերի հողաբաժինների տեղադրությունն ու սահմանները կարող են փոփոխվել հողաշինարարական կարգով կամ թե պետական նշանակություն ունեցող առանձնահատուկ ղեկավարում: Բացի սրանից հողային հասարակությունը յուր իրավագորանդամների մեծամասնության վորոշմամբ կարող է առանձին ծխերի հողամասերի տեղադրությունն ու սահմանները փոխել՝ հողագտագործումը բարելավելու նպատակով (լայն դաշտերի, բազմադաշտ սերմնափոխության անցնելը և այլն): Բարելավված անտե-

ութիւնն վարող ազարակային և հասկածային հողատատերի տեղադրութիւնն աւ սահմանները կարող են փոխվել, առանց հողագտագործողների համաձայնութեան, միայն հողաշինարարութեան կարգով և պետական նշանակութիւնն ունեցող առանձնապէս կարևոր գեպքերում: Տնտեսութիւնը բարելավված ճանաչելու պայմանները տեղական առանձնահատկութիւնների համեմատ սահմանում և Հողգործում:

Գ Լ Ո Ւ Ն Դ.

ՀՈՂՈՒՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԿԵՐՊԿՆ ԿՈՐԳԸ

101. Ընկերական կարգի հողագտագործման դեպքում հասարակութեան մեջ մտնող յուրականչուր հողագտագործողի իրավունք և վերապահվում մշակմանը հետ մասին ընկերութեան ընդհանուր հողաբաժիններից ազատելու, առանց ընկերութեան դատ-դատ տնտեսներին հիմնական տեսքերից հողամաս հատկացնելու:

102. Ընկերական կարգով հողագտագործումն վարող հասարակութիւնները կազմվում են իրենց անդամների աշխատանքն ամենից շահավետ յեղանակով ազատագործելու և գյուղատնտեսական արտադրութեամբ զբաղվելու նպատակով: Նրանք կազմվում են ընկերութեանների մեջ մտնող հողագտագործողների կամավոր համաձայնութեամբ իրենց ազատագործութեան տակ գտնված հողերն ամբողջովին կամ մասամբ ընդհանուր հողագտագործման համար միացնելու կամ ընկերութեանը ընդհանուր հող հատկացնելու միջոցով:

103. Ընկերական կարգով հողագտագործումն ունեցող հողային հասարակութեան մեջ նրա յուրաքանչյուր անդամին հասանելիք հողամասը կարող և և սահմանվել (արտելներ կամ հողի հաւաքական մշակութիւնն վարող ընկերութեաններ) և թողնվել առանց վերոշման (գյուղատնտեսական կոմունաներ):

104. Արտելների և հողի համաքանական մշակութիւնն վարող ընկերութեանների մեջ նրանց անդամների բաժինը տնտեսական հողերից կարող և սահմանվել կամ մշակական չափով, կամ հողորդ համաքանար վերաբաշխման հիմունքներով:

105. Ընկերութեաններ առեղծելու համար պետք և կազմվեն Ա. հիմնադիր համախոստեղծ (պայմանագիր), Բ. կանոնադրութիւնն և Գ. հողի հատկացման արձանագրութեան: Փառանակաւորք ընույն

կրող ընկերությունն հիմնելու համար կանոնադրությունն ու հոգի հատկացման արձանագրությունը պարտադիր չեն:

106. Հիմնադիր համախոսականում (պայմանագրերի մեջ) հիշատակվում են Ա. ընկերության անունն ու նպատակը, Բ. ընկերության (արտելի կամ կոմմունայի) մեջ մտնող հոդողադործողների անուն-ազգանուններն ու թիվը, Գ. ընկերության հոդողադործման համար հատկացրած կամ միացրած հողերի տարածությունը և Դ. յուրաքանչյուր հոդողադործողի տնտեսական հողերից հասանելիք բաժնի չափը, յեթե այդպիսին սահմանվում է:

107. Ընկերական կարգով հոդողադործումն ունեցող հողային հասարակությունների կանոնադրության մեջ, բացի նրա անունից և տեղից, պետք է վորոշված լինեն՝ Ա. ընկերության նոր անդամներ ընդունելու և յեղածների հեռանալու պայմանները, Բ. ինվենտար ձևով բերելու և ոգտադործելու կարգը, Գ. ընկերության անդամների աշխատանքի, արտադրության միջոցների և այլ գույքի հանրայնության չափը, Դ. հողի հասարակական մշակության կարգն ու ընկերության անդամների տնտեսական աշխատանքներին մասնակցելու կանոնները, Ե. ընդհանուր ուժերով մշակվող հողի տեսքերից առացվող արդյունքի բաշխման կանոնները, Զ. ընդհանուր միջոցներ (գրամադուխ) ստեղծելու յեղանակը, Ծ. ընկերության լուծման կարգը և որենքին չհակասող այլ պայմաններ ու կանոններ, վոր ընկերության անդամները կարևոր կհամարեն սահմանել:

Մանրորոշում.— Հոգեփոկոմատը պարտավոր է մշակել և հրատարակել այլ և այլ կարգի ընկերությունների հիմնադիր նորմալ համախոսականներ ու կանոնադրություններ:

108. Ընկերությունից հեռացող անդամն իրավունք ունի ի գիմաց յուր գործադրած աշխատանքի և ընկերության ընդհանուր գույքի (ինվենտար, պաշար և այլն) մեջ թողած յուր բաժնի հատուցումը պահանջելու: Ընկերությունն ևս յուր կողմից կարող է կողմից հեռացող անդամից պահանջել այդ հեռանալու պատճառով առաջացած վնասների հատուցումը: Այս առթիվ տեղի ունեցող բոլոր վեճերը լուծւած են հողային հանձնաժողովները:

Մանրորոշում.— Յեթե ընկերության անդամը նրա կողմից դուրս է գալիս մինչև բերքի հավաքելը, այդ դեպքում նա իրավունք ունի համապատասխան չափով կրճատված բաժնի պահանջելու բերքից:

109. Ընկերութիւնն որենքով թույլատրված համայնական կամ առանձնական հողդատագործման անցնելու կամ ընկերութիւն դադարելու դեպքում, անդամներից յուրաքանչյուրի ընկերական հողաբաժինը սահմանվում է ընկերութիւն կանոնադրութիւն համաձայն, իսկ յեթե այդ մասին կանոնադրութիւնը ցուցմունք չունի, ընկերութիւն անդամների ընդհանուր ժողովի վորոշումներով:

Մանրութիւն. — Պետութիւն անմիջական տնորինութիւն տակ յեղած հողերի վրա տնտեսութիւն վարող գյուղատնտեսական կոլլեկտիւիւներ լուծման դեպքում հողն անցնում է հողային որգանների տրամադրութիւն տակ:

Գ Լ ՈՒ Խ Ե.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ.

110. Յուրաքանչյուր հողային հասարակութիւն մեջ գայութիւն անեցող հողդատագործման կարգիցն անկախ, իրավադոր անդամների մեծամասնութիւն վորոշմամբ (52 և 53 հոդվածների կարգով) ամբողջ հողի կամ նրա մի մասի վրա կարող է կիրարկվել հողի հասարակական մշակութիւն՝ միատեղ աշխատելով և արտադրութիւն միջոցներ ու գործիքներ միասին ոգտագործելով՝ հողերը հերկելու, ցանելու, բերքը հավաքելու համար և այլն:

111. Հողի հասարակական մշակութիւն անցնելու, նաև այդ մշակութիւն պայմաններն ու կարգը սահմանվում է մասնակցողների կանոնադրութիւն (համախոսականով), վոր տոմարադրվում է պատական գործադիր կոմիտեյում:

112. Հողի միատեղ մշակութիւն անցնել ցանկադող փոքրամասնութիւն համար, նրա պահանջի համաձայն, հասարակական մշակութիւն անցնել չկամեցող մեծամասնութիւնը պարտավոր է հողերի գատման ընդհանուր կանոնների հիման վրա համապատասխան հողամաս հատկացնել մեկ տեղում, պահպանելով հողդատագործման փախադարձ հարմարութիւններ:

113. Հասարակական մշակութիւն տակ գտնված հողերը վերաբաժանութիւն դեպքում մնում են համապատասխան հողդատագործողներին և կրճատման լենթակա չեն, յեթե նույնիսկ հողերը բաշխման միավորների համեմատ նրանց ընկնող քանակութիւնից ավելի լեն:

Հ Ա Տ Վ Ա Ծ 6.

**ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՊԱՐԳՈՎ ՀՈՂՈԳՑԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒՆՆՑՈՂ ՀԱՄԱ-
ՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԵՐՈՒ ՎԵՐԱԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ.**

114. Հողի յուրաքանչյուր վերաբաժանությունը կատարվում է հողային հասարակության հատուկ համախոսականի հիման վրա՝ հասարակության անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Համախոսականի մեջ պետք է մասնանշված լինին՝ Ա. վերաբաժանելի հողատեսքերը, Բ. բաշխման միավորները (շնչեր, աշխատավոր ձեռքեր և այլն), Գ. յուրաքանչյուր ծխին հասանելի հողի միավորների քանակը, Դ. վորքան ժամանակով է կատարվում վերաբաժանությունը և Ե. պահեստի հողամասերի ոգտագործության կարգը, յեթե հողերի վերաբաժանությունից հետո այգավիսի հողեր չնույն են:

115. Հողերի վերաբաժանության ժամանակ հասարակության բոլոր ծխերը ստանում են հողաբաժիններ համաձայն բաշխման միավորների և միատեսակ հիմունքներով:

116. Այն հողամասերը, վորոնց վրա տնտեսական և այլ կառուցվածքներ կան, ինչպես նաև այգիներ, պարտեզներ և ուրիշ հատուկ արժեք ունեցող տունկեր, վերաբաժանության յենթակա չեն, բայց այդ հողամասերի տարածությունը կարելի է հաշվի առնել՝ նրանց ոգտագործող ծխերին հատկացնելիք այլ հողերի քանակությունը վորոշելիս:

117. Հողերի վերաբաժանության ժամանակ նախկին ոգտագործողներին են վերապահվում այն հողամասերը, վոր այդ ոգտագործողները հիմնավորապես բարելավել են, մասնավորապես արհեստական կերպով վոռոգել կամ ցամաքեցրել են: Յեթե այդ անհնարին կամ աննպատակահարմար լինի, այգավիսի հողամասերը կարող են տրվել այլ անձերի, վորոնք սակայն պարտավոր են հատուցել նախկին ոգտագործողներին նրանց արած, բայց չարդարացած հատուկ ծախսերի արժեքը:

118. Հասարակության հողաբաժանության վերաբերյալ համախոսականներն ի կատար են ածվում դավառակային գործադիր կոմիտեյում տոմարագրվելուց հետո: Հողաբաժանության համար սահմանված կանոնները չպահպանելու կամ հասարակության ուղանձին անդամների իրավունքները խախտելու դեպքում համախոսա-

կանի տոմարադրութեանը կարող եւ մերժել, մասնաւորապէս համախոսականի անկանոնութեանները, վոր հասարակութեանը պարտաւոր եւ ուղղել կամ հրաժարել հողերի վերաբաժանութեանից։

119. Վարելահողերը կարելի եւ բաժանել հասարակութեան մեջ քնդունված յերեք սերմնափոխութեան ժամանակից վոչ ջուտ, իսկ կանոնավոր սերմնափոխութեան չեղած դեպքում իննը տարաւց վոչ ջուտ։

120. Սահմանված ժամանակից առաջ հողերի վերաբաժանութեան կարող եւ թույլատրվել այն դեպքերում, յերբ հասարակութեան անցնում ե հողդատագործման ու անտեսութեան բարելավված ձևերի (մանր հողակտորներից խոշորների, յեռադաշտ սերմնափոխութեանից բազմադաշտի ե այլն), այլ ե հողերի մի մասի հարկադիր գրավման, հասարակութեանից զատվելու առթիւ հողաբաշխութեան կատարելու կամ հողաշինարարութեան ժամանակ։

121. Մի վերաբաժանութեանից մինչև մյուսը տեղի ժամանակի ընթացքում հողամասերի հավելումն ու կրճատումը կատարվում ե յուրաքանչյուր առանձին դեպքում հասարակութեան համախոսականով (91-րդ հոդվածի ծանոթութեան համաձայն), վորի մեջ պետք ե ցույց տրվին այն ծխերն ու անձերը, վորոնց հողիցը կտրվում կամ վորոնց հողաբաժիններ յեն տրվում, նաև հավելման ու կրճատման չափի հիմունքները։

122. Հողամասերի հավելման կամ կրճատման մասին հասարակութեան համախոսականն ի կատար ե ածվում, յետե հասարակութեան գեղոհ անդամների կողմից 14 օրվա ընթացքում նրանց դեմ հողային հանձնաժողովներին դանդաղ չե տրվում։ Փանդատ վինելու դեպքում հողային վեճերը լուծելու կարգով դանդաղ քննվելուց հետո միայն համախոսականի վորոշումներն ի կատար են ածվում։

Հ Ա Տ Վ Ա Մ 7-

ՏՆԱՏՆՂՆԵՐ ՈՒ ՄԱՐԳԱԳԵՏԻՆՆԵՐ.

123. Յուրաքանչյուր ծուխ իրավունք ունի տատնալու տնտեսեղ գյուղի բնակատեղերի շրջանում։

124. Հողերի վերաբաժանութեան ե հողաբաշխութեան միավորների վերաբերյալ կանոնները աշխատաւոր հողդատագործողների տնտեսեղերի վրա չեն տարածվում ե այդ հագումաւորն տնտեսեղ ու-

տագործողները համաձայնութեան համաժողովը հողաբաժանութեան, կրճատման ու տեղահանութեան յենթակա չեն:

125. Տնատեղերի տարածութիւնը բոլոր ծխերի համար համահավասար չափով սահմանվում է հասարակութեան իրավագործողամաների մեծամասնութեան վորոշմամբ: Սահմանված նորմայի համեմատութեամբ մեծ կամ փոքր տնատեղերի հավասարեցումը կատարվում է ծխերի մյուս հոգերն ավելացնելով կամ պակասեցնելով, աչքի առաջ ունենալով նաև հողի հատկութիւնը:

Ծանոթութիւն.— Գավառային գործադիր կոմիտեների միջնորդութեամբ Հողագործութեան Ժողովրդական Կոմիտեի հարող և սահմանել տնատեղերի տարածութեան նվազագույն և առավելագույն չափը:

126. Հասարակութեան իրավունք է տրվում է հաշիվ այլ հողերի ընդլայնել գյուղի բնակավայրերի շրջանակը՝ փոքր տնատեղերը մեծացնելու և նոր տնատեղեր տալու նպատակով:

127. Հողաշինարարութեան կարգով ագարակային տնտեսութեան և նոր շին տեղծող ծխերի տնատեղերը իրենց նախկին բնակավայրերում վոչ ավելի քան յերեք տարի կարող են մնալ նրանց ոգտագործման իրավունքի տակ, վորից հետո այդ տնատեղերն անցնում են այն հողդտագործողներին (հասարակութեան կամ առանձին ծխեր), վորոնց հողերի կազմի մեջ նրանք մուծված չեն:

128. Հողային հասարակութեանների ոգտագործման տակ քանվող մարգագետինների (խոտհարք) բաշխումը կատարվում է նույն հիմունքներով և բաշխման նույն միավորներով, ինչ վոր սահմանված է վարելահողերի համար: Վարելահողերի ու մարգագետինների բաշխումը տարբեր միավորներով (որինակ վարելահող շնչերի, իսկ մարգագետինն անասունների հաշիվով) արգելվում է:

Ծանոթութիւն.— Տեղական պայմաններից թելադրված բացառիկ դեպքերում Հողագործութեան Ժողովրդական Կոմիտեի համար իրավունք ունի գավառային գործադիր կոմիտեների միջնորդութեամբ սահմանելու մարգագետինների բաշխման առանձին պայմաններ ու ժամանակաշրջան:

129. Այն մարգագետինները, վորոնց վրա ոգտագործող հասարակութեանները կամ առանձին ծխերը կատարել չեն հիմնական բարելավումներ (ցամաքեցնել և այլն) մնում են նույն այդ ոգտագործողների տրամադրութեան տակ: Հավասարաբ հողաբաժանու-

թյան կամ հողաշինարարութեան ժամանակ և մասնակի դրավան միջոցով այդ մարգագետիններն ուրիշներին անցնելու դեպքում վերջինները հատուցանում են նախկին տգաադործողի արած, բայց չարգարացրած ծախսերը:

130. Հողային հասարակությունների, այլ և հասարակութու-նից անջատ հատվածային կամ ագարակային հողաբաժնի վրա մարգագետնի տնտեսություն ունեցող առանձին ծխերի տգաադործութեան տակ յեղած մարգագետինների սահմանների փոխ-խությունը կարող է տեղի ունենալ միմիայն հողաշինարարու-թյան կարգով:

131. Հողագործութեան ժողովրդական Կոմիտարիատին իրա-վունք է տրվում գավառական գործադիր կոմիտեների միջնորդու-թյամբ հրատարակել պարտադիր վորոշումներ ու մանրամասն կա-նոններ առհասարակ բնակչութեանը խրախուսելու և պարտավորեց-նելու, վոր մարգագետինները բարելավեն:

Հ Ա Տ Վ Ա Մ 8.

ՀՈՂԵՐԻ ԶԱՏՈՒՄԸ.

132 Համայնական և առանձնացած-ցրված հողամասերի կաթ-դի հողոգտագործման դեպքում յուրաքանչյուր ծուխ թե մենակ և թե ուրիշ ծխերի հետ միասին միշտ իրավունք ունի, հասարակու-թյան համաձայնութեամբ, հողոգտագործման գոյություն ունեցող կարգից հրաժարվելու և յուր հողերն առանձնացնելու մեկ տեղում:

133. Հասարակութեան մեջ կատարվող հողի ընդհանուր վերա-բաժանութեան ու հողաբաշխութեան ժամանակ տնտեսությունները, ինչ թվով կուզի լինի, այլ և առանձին ծխերն իրավունք ունեն առանց հասարակութեան համաձայնութեան նրա կազմից դուրս գա-լու և պահանջելու հողաբաժանութեան կարգով վորոշված քանակու-թյամբ իրենց հասանելիք հողն առանձնացնել մի տեղում: Այդ դեպ-քում նկատի չե առնվում նաև հողի հատկությունն ըստ համեմա-տական գնահատութեան: Զատված հողամասերի վրա կարող է սահ-մանվել հողոգտագործման ամեն մի յեղանակ:

134. Այն դեպքում, յերբ հասարակութեան մեջ հողերի ընդ-հանուր վերաբաժանություն կամ հողաբաշխություն չե կատար-վում, առանց հասարակութեան համաձայնութեան նրա կազմից հո-ղով հանդերձ դատվելը թույլատրվում է, յերբ այդ պահանջում է

հասարակութեան կազմի մեջ գտնվող բոլոր անտեսութիւնները, (ծխերի) Ծ-րդ մասը և վոչ պակաս 50 անտեսութիւնից, յերբ 250-ից ավելի ծաւառ ունի հասարակութեանը: Առանց հասարակութեան համաձայնութեան նրանից զատվել և ամալի ու բնական դիրքով առանձնացած հողաբաժինների վրա հաստատվել կարող են անտեսութեանները (ծխերը) ամեն թվով յեւ ամեն ժամանակ, յեթե այդ դատման հետեւանքով չի պահանջվի հասարակութեան մեջ հողի ընդհանուր հողաբաժանութիւն կատարել:

135. Զատման յուրաքանչյուր դեպքում հասարակութեանը նախորդը սահմանում է բաշխման միավորը (բոս շնչերի, աշխատավոր ձեռքերի կամ խառն) և հասարակութեանից զատվողների հողերի քանակութեանը վորոշվում է նրանց բաժին ընկնող միավորների թվի համեմատ: Բաշխման միավորը նույնը պիտի լինի հողի բոլոր տեսքերի (վարելահողի, խոտհարքի և այլն) նկատմամբ, թե հասարակութեան կազմից դուրս յեկողների և թե նրա մեջ մնացողների համար:

136. Ամեն հող զատելիս հասարակութեան մեջ մնացողների և նրանից հողով զատվողների հողագտագործման համար պիտի պահպանվեն փոխադարձ առավելագույն հարմարութեաններ: այն և պետք է վերացվի փոխադարձ հողացրվածութեանը, հողի սեպածեփութեանը, հողի հեռավորութեանը, սահմանների անկանոնութեանը, ջրի և ճանապարհների կողմից բաժանանաչափ ապահովված չլինելը, այլ և պիտի պահպանվեն հողաշինարարութեան բոլոր այլ պահանջները:

137. Հողային հասարակութեան հողագտագործման մի յեղանակից այլ յեղանակի անցնելուց և նախորդ հողվածների կարգով հողերը զատելուց հետո, ժամանակից առաջ ընդհանուր հողաբաժանութեանը պահանջող նոր զատումներ թույլ են տրվում միայն հասարակութեան համաձայնութեամբ:

138. Հասարակութեանից զատվելու բոլոր դեպքերում և ընդհանուր վերաբաժանութեան անելիս պահպանվում է հետեւյալ կարգը. ա) բոլոր հարցերը նախապէս քննվում են տվյալ հողային հասարակութեան անդամների ընդհանուր ժողովում, բ) վեճ և դանդաղատ չլինելու դեպքում հասարակութեան վորոշումն է կատար և անվում գովառային հողբաժնում տոմարադրվելուց հետո: Գովառային հողբաժինն այդպիսի դործերը պարտավոր է քննութեան տունել

ստանալուց հետո վոչ ուշ քան 14 որվա ընթացքում, և գ) հողային վեճ ծագած դեպքում դժգոհ կողմն իրավունք ունի հասարակության վորշման դեմ գանգատ տալու հողային վեճերի քննության համար սահմանված կարգով, և գործը վերջնականապես քննվելուց ու լուծվելուց հետո միայն գավառական հողքաժինը հոմապատասխան տոմարադրությունն է կատարում:

ՀԱՏՎԱԾ 9

ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՊՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

139. Աշխատավորական հողոգտագործման հիմնական որենքի հրատարակության որից սկսած (23 հուլիսի 1922 թ. - Դեկրետների և վորոշումների ժողովածու № 16 հոդ. 107) գավառակների գյուղերի և այլ գյուղատնտեսական միությունների վրա մշտական աշխատավորական հողոգտագործման համար հաստատված ե ճանաչվում հողի այն քանակությունը, վոր հիմա գտնվում է նրանց փաստացի աշխատավորական ոգտագործման տակ և որինական կարգով տրված է նրանց հողային մարմինների կամ խորհուրդների համագումարների (գավառակային և գավառական) կողմից՝ աշխատավորական ոգտագործման համար հատկացրած հողերից:

140. Նույն ժամանակից սկսած նախորդ հողվածում մատնանշված կարգով հող տաացած շրջանների և հասարակությունների միջև պարտադիր կարգով հողի հետագա հավասարեցումը դադարում է, և հողաշինարարությունն այնուհետև կատարվում է բնակչության հողոգտագործման համար առավելագույն հարմարություններ ստեղծելու նպատակով՝ հողացրվածությունը հողի հեռավորությունը և այլն վերացնելու միջոցով:

141. Այն վայրերում, վորտեղ գյուղերի և գյուղատնտեսական միությունների մեջ հողային հարաբերությունների բարդություն չկա, հողային որգանները հողոգտագործման պետական ցուցակադրության կարգով (հողային տոմարադրություն) ու այդ մասին յեղած հատուկ կանոններով կատարում են հողի գոյություն ունեցող ոգտագործման ձևակերպումը, վորոշելով նրա տարածությունն ու սահմանները և տալով բնակչությանը համապատասխան փաստաթղթեր:

ՅԵՐԿՐՈՐԴ՝ ՄԱՍ

ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀՈՂԵՐ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԳՈՒՅՔԵՐ

ՀԱՏՎԱԾ I

ԲԱՂԱՔԱՅԻՆ ՀՈՂԵՐ

142. Սույն Որենսդիրքը հրատարակվելու պահից քաղաքի գործող սահմանագծի մեջ յեղած ըստի հողերը համարվում են քաղաքային հողեր: Բացի դրանից քաղաքների վրայ ոգտապործման համար հաստատվում են ստորև մատնանշված հողերը, վոր գտնվում են գավառակներում: Քաղաքի հողն ընդլայնվում է ի հաշիվ գավառակների հողերի նոր քաղաքային սահմանագիծ վորոշելով 144-րդ հոդվածի մեջ մատնանշված հիմունքներով:

143. Սույն Որենսդրքի հրատարակվելու պահից քաղաքի գործող սահմանագիծն է համարվում նրա թե շենքերով ծածկված և թե ազատ տարածության արտաքին սահմանը, վոր մինչև 1923 թ. սեպտեմբերի 22-ը գտնվում եր քաղաքային խորհրդի վարչության տակ, ինչպես նաև քաղաքի սահմաններին կից նախկին քաղաքապետական հողերը:

Մանրություն.— 1. Քաղաքի գործող սահմանագծի ամբողջական կամ մասնակի վորոշումը տեղն ու տեղը կամ հատակագծի վրա, հարկ յեղած դեպքում, տեղի յե ունենում հողաշինարարության ընդհանուր կարգով, թե քաղաքային խորհրդի և թե շրջակա բնակչության պահանջով:

2. Սույն հոդվածում ցույց տրված աշխատանքները քաղաքի սահմանագիծը վորոշելու վերաբերմամբ կատարվում են առաջին հերթին:

144. Քաղաքն ընդարձակելու նպատակով քաղաքի գոյություն ունեցող սահմանագիծը փոխելու և նորը սահմանելու կարիքը հանդիսացած դեպքում այդ մասին խնդիր է հարուցում քաղաքային խորհուրդը կամ ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեարխատը: Քաղաքի նոր սահմանագիծ վորոշելու գործը կատարվում է հողաշինարարության կանոնների ընդհանուր կարգով: Այս տոթիվ համաձայնություն չկայանալու դեպքում գործը հանձնվում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությանն ի վերջնական անորինություն: Քաղաքի նոր սահմանագծի հաստատ-

ված ծրագիրն ի կատար են ածում հողային որգանները:

145. Քաղաքային սահմանագծի մեջ հողային կարգ ու կանոնը վորոշվում է հատուկ որենքներով: Հողային որգանների գործնեությունն այս հոդերի վրա չէ տարածվում:

Ծանոթություն. — Մույն հոդվածում մատնանշված որենքներն ու կանոնները, ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտեի ատի ու Հողագործության Ժողովրդական Կոմիտեի ատի առաջադրությամբ, հրատարակում է Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը:

146. Քաղաքային գործող սահմանագծից դուրս գտնվող բոլոր հոդերը, ում ոգտագործության տակ ել վոր լինի, մնում են գալառակների տերիտորիայի մեջ, գտնվում են հողային որգանների ընդհանուր վարչության տակ և յենթարկվում են Հողային Որենագրքի համապատասխան վորոշումներին: Այն հոդերը, վոր փաստորեն ծառայում են քաղաքային կոմսունալ ձեռնարկություններին (ջրանցք, վորոգման դաշտեր, խորհրդային տնտեսություններ և այլն) հաստատվում են այդ ձեռնարկությունների վրա:

147. Քաղաքային սահմանագծից դուրս գտնվող, կոմսունալ վարչության կազմի մեջ չմտնող հոդերը, վոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ոգտագործման տակն են ու որինական ճանապարհով նրանց են հատկացրած, հաստատվում են այդ հիմնարկությունների և ձեռնարկությունների վրա: Այն հոդերը, վոր գտնվում են քաղաքի բնակիչների գյուղատնտեսական ոգտագործման տակ և որինական ճանապարհով նրանց են հատկացրած, թողնվում են նրանց ոգտագործման տակ աշխատավորական հողորոգտագործման ընդհանուր որենքների հիմունքներով: Քաղաքի այդ կարգի բնակիչները հողորոգտագործման համար միանում և հողային հասարակություն են կազմում:

148. Ժամանակի ընթացքում քաղաքային սահմանագծի մեջ մտնելիք հոդերի վրա անկասն կառուցումներ անելու առաջն առնելու նպատակով քաղաքային խորհուրդներին իրավունք է տրվում, քաղաքի նոր սահմանագիծ վորոշելուց անկախ, կազմել հատակագծեր ու կանոններ քաղաքի սահմանագծից դուրս գտնվող հոդերի վրա շենքեր կառուցանելու մասին: Այդ հատակագծերն ու կանոնները սահմանված կարգով հաստատելուց և բնակչությանը հայտարարելուց հետո, արգելվում է նրանց լսախտող նոր շենքեր

կառուցանել, բացի ժամանակավոր ու թեթև շենքերից, ինչպես նաև յեղածներն ընդարձակելուց: Յեթե անհրաժեշտ համարվի այդ հողերը հատակագծերի համաձայն տրամադրել քաղաքին, այդ դեպքում նրանց վրա կառուցված ու ընդարձակված շենքերը վերացվում են կառուցողների հաշվին:

149. Յեթե քաղաքային սահմանագծին կից հողերի վրա շինություններ կառուցվեն կամ յեթե այդ հողերը գրավեն կոմունալ հիմնարկություններն ու ձեռնարկությունները, այդ դեպքում հողաշինարարության ընդհանուր կարգով քաղաքային սահմանագիծն ընդլայնելու ե, այդ հողերը ներս առնելու համար: Սույն որենքի մեջ մատնանշված դեպքերում հողաշինարարության գործողության ժամանակ իբրև կողմեր հրավիրվում են՝ քաղաքային խորհրդի ու գավառակային գործադիր կոմիտեյի ներկայացուցիչները, շահագրգռված հիմնարկությունները, կազմակերպությունները, ձեռնարկությունները, հողային հասարակությունները և առանձին հողոգտագործողները:

150. Որենագրքի սույն հատվածի վորոշումները տարածվում են նաև այն բնակավայրերի վրա, վոր սահմանված կարգով ճանաչվում են քաղաքատիպ բնակավայրեր:

Հողագործության ժողովրդական Կոմիտարիատին և Ներքին Գործերի ժողովրդական Կոմիտարիատին իրավունք ե տրվում փոխադարձ համաձայնությամբ սույն որենքի կիրարկության համար հրատարակել կանոններ ու հրահանգներ:

ՀԱՏՎԱԾ 2

ՊԵՏԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԳՈՒՅՔԵՐ

Գ Լ Ո Ւ Խ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

152. Պետական հողային գույք են այն բոլոր հողերը, վոր մնում են պետական միասնական հողային ֆոնդի մեջ՝ աշխատավոր հողոգտագործողների ու նրանց միությունների, այլ և քաղաքների ու քաղաքատիպ բնակավայրերի անմիջական ոգտագործության համար հողեր հատկացնելուց հետո:

Մանրթուրքուն. — Միջոցառման հողաշինարարությունը

Հողփողկոժատի կողմից ավարտվելուց հետո արտատեղերի (ձմեռային և ամառային) ամբողջ մնացորդը կադմուս է պետական արտատեղերի հատուկ ֆոնդ:

153. Պետական հողային գույք չեն՝ անտառների, լեռնային արդյունաբերության, յերկաթուղիների, բերդերի ու նման զինվորական կառուցվածքների տակ ընկնող հողերը: Այդ բոլոր հողերը ըստվում են համապատասխան տեսչությանց վարչության տակ՝ ժամանավոր կանոնների հիման վրա: Հատուկ նպատակների համար այդ հողերի կարիքն անցնելուց հետո, նրանք դառնում են պետական հողային գույք:

Ծանոթություն.—Հատուկ նպատակների համար հողեր հատկացնելն ու նրանց պետական հողային գույք դարձնելը տեղի յե ունենում հողաշինարարության ընդհանուր կանոնների համաձայն:

154. Պետական հողային գույքեր են, ա) խորհրդային տնտեսությունները, բ) այն հասութարեր գույքերը, վորտեղ յեղած հողամասերն ու տնտեսական սարք ու կարգը կարելի է սգտագործել և գ) համապետական պահեստի հողամասերը, վոր սահմանված կարգով ուղղակի վորե է նպատակի համար չեն նշանակված, այսինքն չեն տրվել ում է իցե՝ մշտական կամ ժամանակավոր ոգտագործության համար:

155. Պետական հողային գույքերը գտնվում են Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի և նրա որդանների ընդհանուր տեսչության ու տնորինության տակ և սգտագործվում են նրանց կողմից՝ կամ անմիջական տնտեսություն վարելով կամ առանձին հիմունքներով տրամադրելով պետական և հասարակական կադմակերպությունների, հիմնարկությունների ու ձեռնարկությունների, այլև գատ-գատ անձերի ոգտագործության համար:

Ծանոթություն.—Պետական հողային գույքերը պետական հիմնարկությունների, կադմակերպությունների, ձեռնարկությունների և գատ-գատ անձերի ոգտագործությանը տալու կարգը, պայմաններն ու ժամանակաշրջանը վորոշվում են Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաստատած հատուկ կանոններով, վոր ներկայացնում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը:

156. Այսատավոր հողագտագործողներին ու նրանց միություն-

ներին մշտական ոգտագործութեան համար տրվող պետական հողային գույքերը (հողագուրկ կամ սակավահող քաղաքացիներին հող հատկացնելու կամ գաղթի ու բնակչութիւնը նոսրացնելու միջոցով) հանվում են պետական հողային գույքերի ցուցակից և փոխանցվում աշխատավորական ոգտագործման հողերի ցուցակի մէջ. Պետական հողային գույքերը պայմանագրերով ոգտագործելու առթիւ առաջացած բոլոր վեճերը լուծվում են դրա համար ահմանված կարգով:

157. Վորոշ պետքերի համար կամ վորոշ ժամանակով ում և իցե ոգտագործելու տրված պետական հողային գույքերը, այդ կարիքը անցնելուց կամ պայմանաժամը լրանալուց հետո, վերադարձվում են հողերի համապատասխան կարգի մեջ (158 հոդվ. համաձայն):

Գ Լ ՈՒ Խ Բ.

ԽՈՐՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

158. Խորրդային տնտեսութիւնները հանդիսանում են վորպես գյուղատնտեսական ձեռնարկութիւններ, վոր կոչումն ունեն գիտական-տեխնիքական հիմք ծառայելու գյուղատնտեսութեան զարգացման ու հանրացման գործին: Այդ նպատակին հասնելու համար խորրդային տնտեսութիւնները առաջիկայում աշխատում են իրենց գյուղատնտեսական արտադրութիւնը բարձրացնելու և բարելավելու, փորձացուցադրական ձեռնարկութիւններ կազմակերպելու և յերկրագործական արժեքներ (ցեղական անասուններ, ընտիր սերմեր և այլն) արտադրելու ուղղութեամբ, այլ և ջանում են ազդել շրջակա բնակչութեան գյուղատնտեսական արտադրութեան վրա կամ ծառայում են հատուկ նպատակների (գարնցական և կուլտուր-կրթական հաստատութիւններ, բուժավայրեր և այլն):

159. Սույն Որենսդրքի հրատարակութիւնից հետո բոլոր խորրդային տնտեսութիւնները, բացի 147 հոդվածում մատնանշվածներից, գտնվում են Հողագործութեան Ժողովրդական Կոմիտարիատի և նրա տեղական որգանների վարչութեան տակ:

Ծանօթութիւն.— Հողային որգանների և իրենց ոգտագործման տակ խորրդային տնտեսութիւններ ունեցող (վորոնց թվում և հողային որգանների) այլն հիմնարկութիւնների ու կազմակերպութիւնների փոխհարաբերութիւնները սահմանվում են Հողագործութեան Ժողովրդական Կոմիտարիատի

միջնորդությամբ՝ ժողովրդական Կոմիտեաների Խորհրդի հրատարակած կանոններով:

160. Հողային մարմինները պարտավոր են հետևելու, վոր թե իրենց ոգտագործության տակ գտնված և թե պայմանագրով ոգտագործության տրված խորհրդային տնտեսություններն իրենց արտադրողական և յերկրագործական աշխատանքներով սերտ շփումն ունենան տեղական հողագործ բնակչության հետ: Այդ նպատակով խորհրդային տնտեսությունների հետ պիտի կապել յերկրագործական ձեռնարկություններ և կազմակերպություններ (ցեղական անասունների և ընտիր սերմերի բուծարաններ, բեղմնավորման կայաններ, վարձակայաններ, գյուղատնտեսական գործիքներ նորոգելու արհեստանոցներ և այլն):

161. Բոլոր խորհրդային տնտեսություններն առանց բացառության գոյություն ունեն հողային մարմինների հետ կնքած հատուկ պայմանագրի հիման վրա, վորի մեջ անշուշտ պետք է նախատեսված լինի, թե տեղական պայմաններից բղխող ինչ յերկրագործական ձեռնարկություններ պետք է նրանք իրականացնեն պայմանավորված ժամանակաշրջանի ընթացքում: Բացի դրանից պայմանագրի մեջ պետք է նախատեսված լինի, վոր հողերի, ինվենտարի ու շինքերի անխնա ոգտագործումն իրավունք է տալիս պայմանագիրը լուծելու:

Մանրորոշում.—1. Յեթե մինչև սույն Որենագրքի հրատարակվելը խորհրդային տնտեսություններն ոգտագործող բոլոր հիմնարկություններն ու կազմակերպությունները պայմանագրով չեն ձևակերպել իրենց ոգտագործումը, պարտավոր են յերեք ամսվա ընթացքում հողային որդաններին դիմել պայմանագիր կնքելու մասին, հակառակ դեպքում նրանք կորցնում են իրենց ոգտագործման իրավունքը:

2. Սույն հոդվածի ուժը չի տարածվում 146-րդ հոդվածում մասնանշված խորհրդային տնտեսությունների վրա:

162. Պետական հողային ֆոնդի հողերի վրա նոր խորհրդային տնտեսություններ կազմակերպվում են Հողագործության ժողովրդական Կոմիտեիատի կազմադրությամբ միայն՝ կամ անմիջականորեն կամ նրա տեղական որդանների առաջնորդությամբ և կամ թե նրա թույլտվությամբ ու նրա հսկողության տակ այլ պե-

տական ու հասարակական հիմնարկությունները և ձեռնարկությունները կողմից:

Յ Ե Ր Ր Ո Ր Դ Մ Ա Ս.

ՀՈՂԱՇԽՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԳԱՂԹ

Հ Ա Տ Վ Ա Ծ 1.

ՀՈՂԱՇԽՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

163. Հողաշինարարության նպատակն է գոյություն ունեցող հողոգտագործությունները կարգավորել և հողի իրավունքի ու տնտեսական-տեխնիքական նպատակահարմարության պահանջների համաձայն նորերն ստեղծել:

164. Սույն վորոշումների կարգով կատարվում են հետևյալ հողաշինարարական գործողությունները:

ա. Ոգտագործության համար հողեր հատկացնելը պետական կազմակերպություններին, հիմնարկություններին ու ձեռնարկություններին, քաղաքներին ու քաղաքատիպ բնակավայրերին, աշխատավոր հողոգտագործողների խմբակցություններին, այլ և հատուկ պայմաններով (վարձակալության, կոնցեսիայի և այլն) այլ հիմնարկություններին, ընկերություններին ու անձերին:

բ. Հատուկ նպատակներով (զաղթ, կոնցեսիաներ, մարզագետիներ և այլն, հողային ֆոնդեր կազմելը և հողերը մի ֆոնդից մյուսի մեջ փոխանցելը:

գ. Պետական և հասարակական կարիքների համար հողեր գրավելը:

դ. Քաղաքների սահմանազօծեր վորոշելը:

ե. Հողային հասարակությունների ոգտագործության տակ գտնված հողերի բաժանությունը, առանձին տնտեսությունների (ծխերի) ու նրանց խմբերի համար հողերի զատումը, հողային հասարակության բոլոր հողերի կամ նրանց մի մասի բաշխումը (վորպես ագարակային կամ հատվածային հողամասեր) և աշխատավորական հողագործական առանձնացած տնտեսությունների (ծխերի) հողերի բաժանությունը:

զ. Առանձին հողոգտագործությունների հողացրվածությունը,

հողի սեպաձևությունը, հողերի հեռավորությունը, սահմանագծերի անկանոնությունը և հողոգտագործման այլ թերությունները վերացնելը կամ մեղմացնելը.

է. Ճանապարհներ բանալը, փոխելը կամ վերացնելը, ջրատեղ հատկացնելը և հողոգտագործման տեղափոխությունները, վոր կապ ունին հողերի հիմնական բարելավման հետ:

բ. Գյուղատեղիներ հատակագծելը.

և թ. Գալառակները սահմանադեք սահմանելն ու փոփոխելը:

165. Հողաշինարարական գործողությունները կատարում են Հողագործության Ժողովրդական Կոմիտեիատի ընդհանուր ղիտողության, ղեկավարության ու վերահսկողության տակ՝ նրա տեղական հողաշինարարական հիմնարկությունները դրա համար լիազորված հողաչափ-հողաշինարարների ձեռքով:

166. Հողաշինարարական գործողությունները հողաշինարարական հիմնարկությունների նախաձեռնությամբ կատարվում են հետևյալ դեպքերում:

ա. Յերբ հատուկ նպատակ ունեցող հողային ֆոնդեր են կազմվում կամ յերբ նրանց կազմը փոփոխության ե յենթարկվում և

բ. Յերբ հողաշինարարական հիմնարկություններն անհրաժեշտ են համարում անհապաղ վերացնել այս կամ այն շրջանում հողոգտագործման այն թերությունները, վոր տուանձնապես վատ ազդեցություն ունին տնտեսության վրա կամ սրում են հողային հարբերությունները: Մնացած բոլոր դեպքերում վերոհիշյալ գործողությունները կատարվում են միայն շահագրգռված կողմերի միջնորդությամբ:

167. Հողաշինարարության մասնակիցներին հող ե հատկացվում այնքան, վորքան նրանք իրավունք ունին ստանալու սույն Որենսդրքի համաձայն: Այս դեպքում անցյալում նրանց ոգտագործության տակ գտնված հողերի փոխարեն կարող են հատկացնել նույն կարգի այլ հողեր, նկատի առնելով հողերի հատկությունն ըստ համեմատական գնահատության: Ոգտագործության տակ յեղած հողի փոխանակումն այլ կարգի հողերի հետ թույլատրվում ե առանց հողոգտագործողների համաձայնության միայն այն դեպքում, յերբ այլ կերպ հնարավոր չե կանոնավոր հողաշինարարություն կատարել:

Փանթորություն. — Սույն հոդվածի կիրարկության առթիվ

առաջացած վեճերը քննում են հողային հանձնաժողովները՝ հողաշինարարության ընդհանուր կարգով:

168. Հողաշինարարության մասնակցողներին հատկացվող հողերի քանակությունը վորոշվում է հետևյալ հիմունքներով:

ա. Պետական կազմակերպություններին, հիմնարկություններին և ձեռնարկություններին, նույնպես և քաղաքներին ու քաղաքատիպ բնակավայրերին՝ սույն Որենսգրքի 142 և 143 հոդվածների համաձայն.

բ. Գոյություն ունեցող հողային հասարակությունների և առանձնացած տնտեսությունների (ծխերի) հողերը կարգավորելիս՝ որինական կերպով նրանց աշխատավորական հողոգտագործման համար տրամադրված հողերի քանակությամբ.

գ. Հողային հասարակության մեջ բաշխում, հողաբաժանություն և հողերի զատումն կատարելիս՝ հողաշինարարության մասնակցողներին բաժին ընկնող բաշխման միավորի թվով.

դ. Հողային ազատ ֆոնդի հողերը գաղթականության կամ տեղի բնակչության նուսրացնելու դեպքում բաշխելիս՝ հատուկ այդ առթիվ սահմանված նորմաների կամ հող ստացողների աշխատավորական հողոգտագործման փաստացի կարողություն համաձայն.

և ե. Հիմնարկությաններին, հասարակություններին և անհատներին առանձին պայմաններով (վարձակալության, կոնցեսիայի կային) հող տրամադրելիս՝ պայմանագրերի կամ այդ դեպքերին վերաբերող հատուկ կարգադրությունների ցուցմունքների համաձայն:

169. Յեթե հողաշինարարության յենթակա հողը կապված է այլ հողերի հետ (հողացրվածություն, հողի հեռավորություն կային), այդ դեպքում բոլոր հողերը միացվում են, և հողաշինարարությունը նրանց նկատմամբ իրադործվում է միաժամանակ և միատեղ: Այդպիսի դեպքերում հողաշինարարության մասնակցողներին հատկացվելիք հողի քանակությունը նույնպես վորոշվում է նախորդ հոդվածում մասնանշված հիմունքներով:

170. Հողաշինարարական գործողությունները կատարվում են մասնակցությունամբ շահագրգռված կողմերի կամ նրանց ներկայացուցիչների (հողային հասարակությունների լիազորների, անջատ տնտեսություն վարող առանձին հողոգտագործողների, փոխանորդների, կազմակերպությունների, հիմնարկությունների և ձեռնարկությունների ներկայացուցիչների և այլն), վորոնք պետք է լիա-

գործած լինին կատարելու իրենց փոխանորդյալների տեղն այն բոլոր գործողութիւնները, վոր կպահանջվեն հողաշինարարութեան ժամանակ:

Ծանոթութիւն.— Պետական հիմնարկութիւնները, վորոնց վարչութեան տակ շինարարութեան յենթակա հողեր կան, յուրաքանչյուր առանձին դեպքում հողաշինարարութեանը մասնակցելու համար լիազորութիւն են տալիս կամ այդ հողերի կառավարիչներին (որինակ խորհրդային տնտեսութիւններին), կամ հատուկ նշանակված անձներին:

171. Գալառակների սահմանները վորոշելու կամ փոփոխութեան յենթարկելու դեպքում, իբրև կողմ հրավիրվում են բացի սահմանակից հողոգտագործողներից նաև շահագրգռված գալառակների գործադիր կոմիտեների ներկայացուցիչները, իսկ յեթե գալառակի սահմանվող կամ փոփոխվող սահմանագիծը հանդիսանում է նաև գալառի սահմանը, այդ դեպքում հրավիրվում են նաև համապատասխան գալառների գործադիր կոմիտեների ներկայացուցիչները:

172. Հողաշինարարական գործողութիւններին մասնակցելու համար շահագրգռված կողմերին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է տրվում նախորոք և այնպիսի հաշվով, վոր նրանք տեղական պայմաններում հնարավորութիւն ունենան նշանակված ժամին ներկա լինել ցույց տրված վայրերում: Հարգելի պատճառով ուշացած կողմին իրավունք է տրվում միջնորդելու, վոր յուր բացակայութեան ժամանակ կատարված հողաշինարարական գործողութիւնները նորից կատարվեն: Այդպիսի միջնորդութիւնը կարող է հարգվել միայն այն դեպքում, յեթե ապացուցվի, վոր ուշանալը տեղի յե ունեցել ուշացողից անկախ պատճառներով (ծանր հիվանդութեան, տարերային աղետ և այլն):

173. Հողաշինարարներն իրավունք ունին իրենց հայեցողութեամբ հրավիրելու կողմնակի վստահութիւն վայելող ընթերականներ՝ հողաշինարարութեան ժամանակ կատարված գործողութիւնների հավաստի վկայութեան համար:

Գ Լ ՈՒՆ Բ.

ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏՈՒՑՈՒՄԸ

174. Հողաշինարարական գործողութիւններին համար հողաշինարարական հիմնարկները վորոշ վճար են առնում կողմերից, վոր

րոնց համար կատարուած են գործողութիւնները: Յերբ այս վերջինները կատարվում են պարտադիր կարգով, հատուկ նպատակ ունեցող հողային ֆոնդեր ստեղծելու համար (գալթականական, կոնցեսյոն և այլն), այդ դեպքում հողաշինարարութեան ծախսերը հոգացվում են տեղական կամ համապետական միջոցներէից, նայելով թե ինչ նպատակով ե ֆոնդը կազմվում:

Մալիթրոթյուն.— Հողաշինարարութեան գործողութիւնների համար վճարվող գումարների չափը և գանձելու, պահելու ու ծախսելու կարգը սահմանվում ե առանձին կանոններով: 175. Հողաշինարարութեան մասնակցողները, հողաշինարարական գործողութիւնների համար բացի սահմանված վճարից պարտավոր են հողաշինարարներին տրամադրելու.

ա. Ապրելու և զբաղվելու համար հարմար բնակարան.

բ. Աշխատանքների և սահմանանիշեր դնելու համար պահանջվող նյութեր.

գ. Հողաշինարարութեան համար անհրաժեշտ գործիքների և նյութերի տեղափոխութեան համար փոխադրական միջոցներ, և դ. Անհրաժեշտ բանվորական ուժեր:

176. Նախորդ հոգվածում հիշատակված պարտավորութիւնները բաշխվում են հողաշինարարութեանը մասնակցողների վրա համաձայն շինարարութեան յենթակա հոդերի տարածութեան և կատարվող գործողութիւնների տեսակի համապատասխան չափով, Յեթե պարտադիր կարգով իրենց համար կատարվող (հոգվ. 164 կետ. բ.) հողաշինարարութեան մասնակցողները հրաժարվում են կատարելու կերպով հողաշինարարութեան ծախսերը վճարելուց, այդ դեպքում անհրաժեշտ ծախսերը վերահիշյալ չափով գանձվում ե կողմերից վարչական կարգով:

Գ Լ ՈՒ Ն Գ.

ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

177. Հողաշինարարութեան վերաբերյալ գործավարութիւններ տեղի յե ունենում հետևյալ հաջորդականութեամբ:

ա) Հողաշինարարական գործի հարուցումը, բ) հողաշինարարական գործի նախապատրաստումը, հողաշինարարութեան նախագիծ կազմելն ու մասնակցողներին ներկայացնելը, գ) հողաշինարարութեան գործի կատարումը:

բարութեան նախագծի հաստատելը, ի կատար ածելը վորոշված տեղերում սահմանանիշեր դնելով և դ) հողաշինարարական փաստաթղթերի կազմելն ու կողմերին հանձնելը:

178. Շահագորդված կողմերի նախաձեռնութեամբ հողաշինարարական գործողութիւններ կատարվում են՝ հողային հիմնարկութիւններն իրանց ներկայացրած գրավոր միջնորդութեան հետևանքով, իսկ հողաշինարարական հիմնարկութիւնների նախաձեռնութեամբ՝ նրանց այդ առթիվ կայացրած հատուկ վորոշումներն հիման վրա:

Մանրոթութիւն.— Աշխատավոր հողոգտագործողները հողաշինարարութեան մասին կարող են միջնորդել նաև բանավոր կերպով: Այդ դեպքերում միջնորդութիւններն արվում են հողաշինարարական հիմնարկութեանը՝ այդ բանի համար լիազորված պաշտոնյաների առաջ և զրի յեն առնվում նրանց կողմից:

179. Աշխատավորական հողոգտագործման գրված, այլև գափառական նշանակութիւն ունեցող կազմակերպութիւնների, հիմնարկութիւնների և ձեռնարկութիւնների հողերին վերաբերող հողաշինարարական գործողութիւնների համար դիմումն արվում է գափառական հողաշինարարական հիմնարկութիւններին, իսկ համապետական արժեք ունեցող հողոգտագործման շինարարութեանը վերաբերողները՝ կենտրոնական հողաշինարարական հիմնարկութիւններին:

180. Հողաշինարարական հիմնարկութիւնները մերժում են հողաշինարարութիւն կատարել, յերբ կողմերը միջնորդում են որենքի պահանջներին հակասող և կամ այդ հիմնարկութիւնների կողմից տնտեսական-արտադրական տեսակետից աննպատակահարմար ճանաչված հողաշինարարական գործողութիւնների մասին: Մերժման դեմ յերկու շաբաթվա ընթացքում գանդատ կարելի է տալ հետևյալ ատիճանի ատյանին:

181. Հողաշինարարական գործողութիւններ կատարելու միջնորդութիւն հարուցանող կողմը գործի ամբողջ ընթացքում իրավունք ունի խնդրելու գործի դադարեցումը, վճարելով մինչ անկատարված գործողութիւնների ծախսերը: Սակայն գործը սկսած և շարունակվի, յեթե նրա դադարեցման մասին միջնորդութիւն է հարուցվում հողաշինարարութեան ծրագիրը հաստատվելուց հետո կամ յեթե հողաշինարարութեան մնացած մասնակիցներից վորև է մեկը պնդում է այն շարունակելու վրա: Այս դեպքում հրաժար-

ված կողմն ևս պարտավոր ե ընդհանուր հիմունքներով մասնակցել հողաշինարարութեան ծախսերին, յեթե մյուսների հողերի հետ միասին հողաշինարարութեան պիտի յենթարկվեն նաև նրա հողերը:

182. Հողաշինարարութեան գործի նախապատրաստութեանը կայանում ե շինարարութեան յենթակա հողերի կազմը վորոշելու, հողաշինարարութեան յենթակա վայրի տնտեսական-տեխնիքական հետախուզման, հողային իրավունքները վորոշելու, հողաշինարարութեան մասնակցողների ցանկութեանները պարզելու և հիշյալ վայրի շինարարութեան ամենից ուղիղ և նպատակահարմար նախագիծ կազմելու մեջ: Գործի նախապատրաստական աշխատանքները լրացնելուց հետո հողաչափ-հողաշինարարը պատրաստում ե անհրաժեշտ բացատրական գծանկարներ ու գեկուցում, ներկայացնում ե այն հողաշինարարութեանը մասնակցողներին և ապա նրանց բոլոր հայտարարութեաններին ու բողոքների հետ միասին, յեթե այդպիսիները լինին, գեկուցումը մատուցանում ե համապատասխան հողաշինարարական հիմնարկութեան:

Ծանոթութուն.— Գործի նախապատրաստութեանը մասնակցելու համար, հարկ յեղած գեպքում, հրավիրվում են գյուղատնտեսներ, հիգրո-տեխնիքներ և այլ մասնագետներ:

183. Հողաչափ-հողաշինարարի գործի նախապատրաստութեան առթիվ ներկայացրած գեկուցումը քննելուց և վեճերն ու գանգատները լուծելուց հետո, հողաշինարարական հիմնարկութեանը վորոշումն ե տալիս կամ գործը շարունակելու մասին, կամ վերադարձնում ե յուր կողմից մատնանշված լրացումները կատարելու և կամ, հողաշինարարութեան պահանջների տեսակետից գործի աննպատակահարմարութեանը պարզելու գեպքում, կարճում ե այն:

Ծանոթութուն.— Հողաշինարարութեան հիմնարկութեաններին իրավունք ե վերադառնվում հողաչափ-հողաշինարարներին հանձնարարել գործի նախապատրաստութեանից անմիջապես հետո կազմել և իրագործել հողաշինարարական ծրագիրները, առանց հիշյալ հիմնարկութեանների նախնական ստուգման:

184. Հողաշինարարութեան ծրագիրը կազմել նշանակում ե հողաշինարարութեան մասնակցողներին մանրամասն և ճշտութեամբ ցույց տալ հողերի հատկացման տեղը, պահպանելով կողմերի իրավունքներն ու որինական շահերը, ինչպես նաև հողաշինարարու-

թյան տնտեսական, տեխնիքական կանոնները, այլև պատկերացնել հողերի հատկացումը նախագիծ-հատակագծի վրա: Հողերի ծրագրվող սահմանները տեղնուտեղը վորոշվում են ժամանակավոր նշաններով, իսկ վեճ ու գանգատ չլինելու դեպքում ամրապնդվում են մնայուն ծրային նշաններով:

185. Հողաշինարարության պատրաստի ծրագիրը ներկայացվում է կողմերին հատակագծերի վրա ու բնության մեջ ու այս մասին կազմվում է առանձին արձանագրություն: Հողաչափ-հողաշինարարն այդ դեպքում պարտավոր է ամեն կերպ աշխատել համաձայնեցնել կողմերի ցանկությունները, սակայն վոչ ի վնաս հողաշինարարության պահանջների՝ անհրաժեշտ դեպքում մտցնելով ծրագրի մեջ նպատակահարմար փոփոխություններ և ուղղումներ:

186. Կողմերի չվերացված վեճերը, հայտարարություններն ու գանգատները մոծվում են հողաշինարարության ծրագիրը ներկայացնելու արձանագրության մեջ, և հողաչափ-հողաշինարարը ամբողջ գործը յուր յեզրակացության ու վեճերը հայտարարելու նախագծի հետ միասին մատուցանում և հողաշինարարական հիմնարկությանը, ծրագիրը ներկայացնելուց հետո վոչ ուշ քան մի շաբաթվա ընթացքում:

187. Հողաշինարարական հիմնարկությունը քննության առնելով գործը և կողմերին նախագիծը ներկայացնելու հետ կապված վեճերն ու գանգատները, կամ վորոշում է հաստատել հողաշինարարության նախագիծն անփոփոխ թե վորոշ փոփոխություններով և կամ մատնանշելով կատարելիք փոփոխությունները, վճիռ է կայացնում նոր նախագիծ կազմելու մասին:

188. Հողաշինարարության նախադիժն ի կատար է ածվում հողոգտագործման ծրագրված սահմանները տեղն ու տեղը հաստատելով մնայուն ծրային սահմանանիշերով, յեթե այդ չե կատարվել նախագիծը կողմերին ներկայացնելու ժամանակ:

189. Ուղիղ կատարված հողաշինարարական նախագիծը վերջնականապես հաստատում է հողաշինարարության հիմնարկությունը: Այս դեպքում հողաշինարարության կատարված նախագծի վերաբերյալ վորոշման մեջ համապատասխան առիթներով մատնացույց անելով նախագիծ-հատակագիծը պետք է հիշատակվի Ա. յեբր, վորտեղ, ինչ կարգադրության հետևանքով և ինչ հողաշինարարական գործողություններ են կատարվել, Բ. ինչ հողեր (տեսակը

տարածութիւնը, տեղագրութիւնը և սահմանները), ում և ինչ կարիքների համար են հատկացվում, Գ. յերբ, ինչ կարգով և ինչ պայմաններով կողմերը պետք ե ձեռնարկեն հողաշինարարութեան ժամանակ սահմանագծված հողերի ոգտագործութեանը, Դ. ինչ հա-
տուկ պայմաններ, պարտավորութիւններ ու լիազորութիւններ են սահմանվում հողոգտագործողների համար հողաշինարարութեան հաստատված նախագծի համաձայն իրենց անցնող հողերի ոգտա-
գործման հետեւանքով, Ե. ինչպես են բաշխվում մասնակցողներին միջև հողաշինարարութեան հետ կապված ծախսերը, Զ. ում կողմից, ումը և ինչ հատուցում պիտի տրվի այն ծախքերի ու բարելավու-
թիւնների փոխարեն, վոր արված են հողաշինարարութեան ժամա-
նակ հատկացրած հողի վրա և վոր չեն ոգտագործվել նախկին հող-
ագտագործողները:

190. Հողաշինարարական հիմնարկութիւնների կողմից հողա-
շինարարութեան նախագծերը վերջնականապես հաստատելուց և կազ-
մված հողոգտագործութիւնների պետական տոմարագրութիւնից հետո հողաշինարարութեան մասնակցողներին տրվում են համա-
պատասխան վկայականներ: Այդ փաստաթղթերի մեջ պետք ե նշա-
նակված լինին հողոգտագործութեան սահմանները, տեղագրութիւնը,
տարածութիւնը, կազմը և անունը, ինչպես նաև հողոգտագործող-
ների անունները, հողաշինարարութեան իրագործման ժամանակը և
հիմունքը, հողոգտագործման պայմանները և հողաշինարարութեան
նախագծի հաստատման արձանագրութեան մեջ մատնանշված այլ
կարևոր տեղեկութիւնները: Հողաշինարարական հատակագծերի
խսկական որինակները, արձանագրութիւնները և գործավարու-
թիւնները պահվում են հողաշինարարական հիմնարկութիւններում:

191. Ամեն տեսակ հատակագծերն ու հողաշինարարութեան
վերաբերյալ այլ պաշտոնական գրութիւնները, յեթե կազմված
լինին վոչ հողաշինարարական հիմնարկութիւնների կողմից կամ
նրանց կողմից վավերացրած չլինին, համարվում են անվավեր և
չեն կարոյ ապացույց լինել նրանց հիման վրա տեղի ունեցող հող-
ագտագործման որինականութեան:

ՀԱՏՎԱԾ 2

ՀՈՂՈԳՏԱԳԻՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Հողային տնտեսագրություն)

192. Հողագտագրածման պետական տոմարագրության (հողային տոմարագրության) նպատակն է բոլոր հողագտագրածությունների իրավական ու տնտեսական վիճակի մասին ճշկրիտ ու ժամանակակից տեղեկություններ հավաքել և պահել կարգավորված ու դյուրատես, ի նկատի առնելով հողերի համապետական ծավալով կառավարելու խնդիրը, այլև ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի կարիքները և հողագտագրածողների իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Վերսիշյալ նպատակներով հողային տոմարագրության մեջ յուրաքանչյուր հոդամասի նկատմամբ պիտի մոծվեն հետևյալ տեղեկությունները, ա) հոդամասի տեղագրությունը և անունը, նրա պարունակած հողի ընդհանուր տարածությունն ըստ առանձին տեսքերի, կարևորագույն շենքերն ու տնտեսական կառուցվածքները, բ) հողագտագրածողների անունը և հոդամասը նրանց տրամադրելու հիմունքները, գ) ողագրածելու հետևից ունեցող հատուկ իրավորություններն ու պաշտպանությունները և դ) այլ տեղեկություններ, վորոնց մոծումը տոմարագրության մեջ կնախատեսնվի հետագա կարգադրություններով:

193. Հողերի պետական տոմարագրությունը լինում է հիմնական, այն է քարտեզների ու ցուցակների նախնական լցնելը և ընթացիկ, վորի նպատակն է տոմարագրության ակտերի մեջ ժամանակին մոծել հոդամասերի իրավական, տնտեսական և բնական գրության նկատմամբ ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոխությունները:

194. Հողային տոմարագրությունը կատարվում է յուրաքանչյուր գավառակի համար առանձին և կազմվում են հետևյալ ակտերը, ա) գավառակի հողագտագրածության ընդհանուր քարտեզը, բ) առանձին գյուղերի քարտեզները: գ) գավառակի հողագտագրածողների ընդհանուր ցուցակը, դ) գավառակի բոլոր գյուղերի տնտեսիների ցուցակը, և ե) գավառակի հողային հասարակությունների ցուցակը:

195. Գավառակի սահմաններում գտնվող բոլոր առանձին հոդամասերն առանց բացառության յենթակա յեն տոմարագրության:

Ընդհանուր ոգտագործության տակ գտնվող հողը տոմարագրվում է իբրև մեկ հողամաս, առանց առանձին հողագտագործողների մեջ բաժանելու:

196. Տոմարագրության ակտերի մեջ յուրաքանչյուր հողագտագործության համար անշուշտ պիտի հիշատակվեն՝ Ա. հողաշինարարական հիմնարկությունների վորոշումները հողաշինարարությունը կատարելու և հողաշինարարական նախագծի հաստատման մասին, Բ. աշխատավորական հողագտագործման համար տված հողի իրավունքի կարճումը, Գ. հողային հասարակության ոգտագործության տակ գտնվող հողերի կազմի փոփոխությունները, հասարակության կազմի մեջ նոր ծխերի մտնելն ու ծխերի հասարակությունից դուրս գալը, հողային հասարակությունների կանոնադրությունները և նրանց փոփոխությունները, հողային հասարակությունների համախոսականները հողագտագործման յեղանակ ընտրելու և փոփոխելու, ընդհանուր վերաբաժանության և շնչաբաժինների համեմատն ու կրճատման մասին, Դ. աշխատավորական հողագործական տնտեսությունների (ծխերի) բաժանությունը, տան գլխի փոխվելը, հողի աշխատավորական վարձկալության պայմանագրերը, Ե. հողերի մասին ծագող վեճերն ու նրանց մասին հողային հանձնաժողովների կայացրած վերջնական վորոշումները: Զ. սահմանները վորոշելն ու վերականգնելը և Է. այլ ակտեր, վորոնց պարտադիր տոմարագրությունը կսահմանվի հետագա կարգադրություններով:

197. Հողային տոմարագրության գործադրությունը հանձնվում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին և նրա տեղական օրգաններին:

198. Հողային տոմարագրության օրգանները պատասխանատու յեն տոմարագրության ակտերի պարունակած տեղեկությունների և նրանցից տրված քաղվածքների ճշտության համար: Այս տեղեկությունները բոլոր հաստատություններն ու անձինք պարտավոր են ընդունել իբրև ստույգ տեղեկություններ, մինչև վոր հակառակը չապացուցվի հողային վեճերի քննության կարգով:

199. Հողային տոմարագրության օրգանը պիտի ունենա հողային դիվան, վորին պիտի հանձնվեն առաջ վերջացրած հողային գործերը, ակտերն ու հատակագծերը, ինչպես նաև հողաշինարարական հիմնարկությունների վերջացրած նոր գործերը:

Հողային գիւմանից գործերի, ակաւերի և հատակագծերի իսկական որինականները դուրս են տրվում միմիայն հողաշինարարական և դատական հիմնարկութիւնների պահանջով և վերադարձվում են կարիքն անցնելուց հետո անմիջապէս: Հողային փաստաթղթերը կորցնող պաշտօնյաներից վարչական կարգով գանձվում են նույն փաստաթղթերը վերականգնելու համար պահանջվող ծախսերը:

200. Տոմարադրութիւն ժամանակ բոլոր հողոգտագործողներն ու հիմնարկութիւնները պարտավոր են ներկայացնել հողոգտագործութիւն մասին իրենց ունեցած բոլոր փաստաթղթերը, պետք են աւել հաղորդեն տոմարադրութիւն համար պահանջվող բոլոր տեղեկութիւնները: Այս պարտականութիւնները չկատարող հողոգտագործողները յենթարկվում են տուգանքի, նաև վճարելու յեն տոմարադրող մարմնի այն ծախսերը, վոր կարող է առաջ գալ նրանց անփութութիւններից:

201. Հողաշինարարական հիմնարկութիւնները (նրանց թվում և հողային հանձնաժողովները) հողային գործերին վերաբերող իրենց բոլոր վորոշումներն ու վճիռները, որինական ուժի մէջ մտցնելուց հետո վոր ուշ յերկու շաբաթից, պարտավոր են ուղարկել տոմարագրութիւն որդաններին՝ տոմարադրելու և ապա շահագրգռված անձանց տալու համար: Այդ վորոշումները տալիս են միայն տոմարագրող որդանները հողաշինարարական հիմնարկութիւններից այն ստանալուց անմիջապէս հետո:

202. Հողաշինարարութիւն չպահանջող հողոգտագործութիւնների տոմարագրութիւն հետ միաժամանակ պիտի վորոշվեն նրանց տնրածութիւնը, կազմը և սահմանները, վոր հաստատվում են հարկ յեղած դեպքում ծրային սահմանանիշերով: Այս նպատակով տվյալ վայրն ուղարկվում են հողաչափ—հողաշինարարներ: Վերջինները սահմանները վորոշում են հրավիրելով կորմերին և ըստ փաստացի անվիճելի ազտագործման, կամ սահմանակից հողոգտագործողների համաձայնութիւնով, իսկ վիճելի դեպքերում փաստաթղթերի հիման վրա:

Սույն կարգով է կատարվում նաև սահմանանիշերի վերականգումը նրանց խախտման կամ կորչելու դեպքում:

Մանորութիւն.—Սահմանակից հողային հասարակութիւնների հողոգտագործման վիճելի սահմանը փաստաթղթերի բացակայութիւն կամ թերութիւն պատճառով վերականգնելը

անկարելի յեղած դեպքում, հողի վիճելի աստածությունը բաշխվում է այդ հասարակությունների մեջ շնչերի թվի համեմատ և հաշվի առնելով հողի կողմից նրանց ապահովված լինելը:

203. Հողերի տոմարագրությունը կատարելու, ինչպես նաև նրանից քաղվածքներ ու տեղեկություններ առնելու համար շահագրգռված կողմերից տուրք է գանձվում հատուկ սահմանված առկաքնի համաձայն:

Հ Ա Տ Վ Ա Մ 2

ՀՈՂԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

204. Հողային գործերին վերաբերող վեճերի լուծման համար հիմնվում են գավառակային, գավառական¹ և գլխավոր հողային հանձնաժողովներ, վոր գործերը քննում են դատ վարող կողմերի մերջության կարգով:

205. Հողային հաճնաժողովների քննությանը յենթակա յեն հողաշինարարության ընթացքում առաջ յեկող բոլոր վիճելի գործերը, այլ և հողի ոգտագործման իրավունքին վերաբերյալ վեճերը այն ե՛ հողի խմբական և անհատական ոգտագործումը, հասարակությունից հողեր զատելը, ընդհանուր և մասնակի հողաբաժանությունը, հողի ոգտագործման իրավունքից ամբողջովին կամ մասնակի զրկելը, որենքով սահմանված դեպքերում հողոգտագործության տարածության, սահմանների, տեղագրության և կազմի փոփոխելը (հողաշինարարություն, մեխիորացիա, ճանապարհներ շինելը, պետական և հատարական կարիքների համար պահանջվող հողի ոտարացումն և այլն), ընտանիքների բաժանության հողային խնդիրներ և հողի ոգտագործման վերաբերյալ այլ վեճեր:

206. Հանրապետական իշխանության տեղական վոչ մի օրգան, քացի սույն որենքում հիշատակվածներից, իրավունք չունին քննության առնելու հողային վեճերը և միջամտելու նրանց քննությանը, դադարեցնելու նրանց վորոշումների կիրարկությունը, ինչպես նաև փոփոխելու կամ վերացնելու նրանց վորոշումները:

207. Գավառակային հողային հանձնաժողովները կազմվում են գավառակային գործադիր կոմիտեյին առնթբր: Այդ հանձնաժողովի նախագահն է գավառակային կոմիտեյի կողմից նշանակ-

ված անդամը և յերկու անգամ, վորոնց ընտրում և խորհուրդների գավառակային համագումարը: Բացակայող անդամներին փոխարինելու համար նույն կարգով ընտրվում են յերկու փոխանգամ: Գավառակային հողային հանձնաժողովների բոլոր անդամներին ու փոխանդամներին հաստատում են գավառական գործադիր կոմիտեները:

Մանրորդ.— Յերկրորդ անգամ ներկայացրած թեկնածուներին չհաստատելու դեպքում գավառական գործադիր կոմիտեն գավառակային հողային հանձնաժողովի կազմը նշանակում և յուր հայեցողությամբ:

208. Գավառական հողային հանձնաժողովները կազմվում են գավառի հողագործության բաժնին առնթեր: Այդ հանձնաժողովի կազմն և նախագահ և յերկու անգամ՝ գավառային հողբաժնի վարիչը և ժողովրդական դատավորը:

Գավառական հանձնաժողովների նախագահներին ու փոխնախագահներին հաստատում են գավառական գործադիր կոմիտեները, իսկ մնացյալ անդամներին ու փոխանդամներին նրանք հաստատում են համապատասխան որդանների առաջարկությամբ:

209. Հողային գլխավոր հանձնաժողովը կազմվում և Հողագործության ժողովրդական Կոմիտեիատին առնթեր: Այդ հանձնաժողովի նախագահին և մեկ անգամին նշանակում և Հողագործության ժողովրդական Կոմիտեիատի կուլեգիան, իսկ յերկրորդ անգամին Գլխավոր Դատարանը:

210. Հողային հանձնաժողովների անդամները դատավորի պատահանություններ կատարելիս ժողովրդական դատավորների իրավունքներ են վայելում: Հողային հանձնաժողովների ընտրովի անդամները ընտրվում են մի տարով:

211. Գավառակային հողային հանձնաժողովների քննությանը գավառակի սահմաններում յենթակա յեն Ա. գյուղերի ներքին հողաշինարարության հետևանքով առաջացած, այլ և նույն պատճառով առանձին գյուղերի միջև ծագած վեճերը և Բ. առանձին անհատների կամ ծխերի, այլ և հողային հառարակությունների վեճերը հողի իրավունքի մասին:

212. Գավառական հողային հանձնաժողովի քննության յենթակա յեն՝ Ա. վորպես առաջին աստիճանի ատյանի գավառակների մեջ տեղի ունեցող հողաշինարարության այլ և խորհրդային տնտեսությունների, հավաքական տնտեսությունների, ձեռնարկությունների

ու հիմնարկութիւններէ հողաշինարարութիւնից ծագող վեճերը և հողի իրավունքի վերաբերյալ այն վեճերը, վորտեղ կողմերից մեկը պետական հասարակական հիմնարկութիւն եւ և Բ. վորպես յերկրորդ աստիճանի ատյանի գալառակային հողային հանձնաժողովի քննութեան յենթակա գործերը, յեթե նրանց դեմ գանգատ եւ տրվում:

213. Հողային գլխավոր հանձնաժողովի քննութեան յենթակա յեն՝ Ա. վորպես առաջին աստիճանի ատյանի գալառներէ, գալառական կամ պետական նշանակութիւն ունեցող հիմնարկութիւններէ ու ձեռնարկութիւններէ և շրջակա բնակչութեան մեջ հողաշինարարութեան ընթացքում ծագող վեճերը և Բ. վճարեկութեան կարգով գալառական հողային հանձնաժողովներէ յենթակա գործերը:

214. Հողային հանձնաժողովներում գործը քննելու կարգը, նրանց անգամներին բացակայելը, կողմերի ներկայացուցչութիւնը, վկաներին ու գիտակ անձանց ատյան կանչելը, նրանց վարձատրութիւնը, նրանց ատյանի չներկայանալու հետեանքները և այլն վորոշվում են ժողովրդական դատարանում գործերը քննելու համար սահմանված պատճաշ որենքներով:

215. Հողային հանձնաժողովներէ վորոշումներէ դեմ գանգատ տրվում եւ վճիռն արձակող հողային հանձնաժողովի միջոցով վճիռը վերջնական ձևով հայտարարվելուց հետո վոչ ուշ քան յերկու շաբաթվա ընթացքում:

Գանգատները գործի հետ միասին վճիռն արձակող հանձնաժողովը ներկայացնում եւ վերադաս ատյանին գանգատը տալուց հետո վոչ ուշ քան յերկու շաբաթվա ընթացքում: Դանդաղութեան և խնդիրը չընդունելու դեմ գանգատները տրվում են անմիջապէս հաջորդ ատյանին:

216. Հողային հանձնաժողովներէ վորոշումներն ի կատար չեն ածվում մինչև նրանց դեմ ըստ ելութեան կամ բեկման կարգով բողոքելու համար սահմանված պայմանաժամի լրանալը: Այդպիսի գանգատներ տալը կասեցնում եւ վորոշումն ի կատար ածելը մինչև գործի վերջնական լուծումն ստանալը:

217. Պայմանաժամը հարգելի պատճառով բաց թողնելու դեպքում վերականգնելու մասին արված դիմումները քննում եւ նույն հողային հանձնաժողովը, վորի վորոշման դեմ գանգատ եւ տրվում: Պայմանաժամը վերականգնելու համար արված գանգատը

շընդունելու մասին բողոք եւ արվում հողային հանձնաժողովներին վորոշումները բողոքարկելու կարգով:

218. Հողային վեճերի վերաբերյալ գործերի բարձրագույն վերահսկողութիւնը և հողային գլխավոր հանձնաժողովի վորոշումների դեմ տված բեկման բողոքներին նայելը պատկանում ե հողային վեճերի բարձրագույն վերահսկողութեան հատուկ կոլլեգիային, վորի նախագահին և յերկու անդամներին հաստատում ե Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն: Նախագահին ու մի անդամին ներկայացնում ե ի հաստատութեան Հողագործութեան ժողովրդական Կոմիսարիատը, իսկ յերկրորդ անդամին՝ Արդարատեւութեան ժողովրդական Կոմիսարիատը:

219. Հողագործութեան ժողովրդական Կոմիսարիատին իրավունք ե արվում Արդարադատութեան ժողովրդական Կոմիսարիատի համաձայնութեամբ սույն հատվածի կիրարկութեան համար կանոններ հրատարակելու ի ղեկավարութիւն հողային հանձնաժողովներին:

ՀԱՏՎԱԾ 3

Գ Ա Ղ Թ

220. Գաղթն ու խնդրակութիւնը (նախապես հողերը տեսնելու և ընտրելու նպատակով) համարվում ե ազատ ու կամավոր գործ: Միայն բացառիկ դեպքերում դավառական հողային բաժնի առաջարկութեամբ և Հողագործութեան ժողովրդական Կոմիսարիատի հաստատութեամբ զաւառական գործադիր կոմիտեներին իրավունք ե արվում գաղթը պարտադիր հայտարարելու, վոր սակայն իրագործվել կարող ե այն դեպքում միայն, յերբ գաղթի հետ կապված ծախսերի և գաղթականների հողային տնտեսական շինարարութեան համար բաց կը թողնվին համապետական կամ տեղական միջոցներ:


221. Գաղթի գործը Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմաններում յենթակա յե Հողագործութեան ժողովրդական Կոմիսարիատի իրավասութեանը, վորի միջնորդութեամբ Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն գաղթի համար բաց ե հայտարարում այս կամ այն շրջանը և կամ գաղարեցնում ե գաղթը դեպի այդ վայրերը:

222. Նախորդ հոդվածի սահմաններում գաղթի ընդհանուր տնօրինության կարգով Հ. Ս. Խ. Հ. Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին և հանձնվում գաղթի գործի ղեկավարությունն ու վերահսկողությունը, գաղթի ծրագրի մշակությունը, գաղթի համար հողային ֆոնդ ստեղծելն ու նախապատրաստելը, գաղթողներին դուրս բերելու տեղավորելու և բնակեցնելու գործը կազմակերպելը, ինչպես նաև գաղթի համար զրամական միջոցներ հայթայթելը և այդ միջոցների հայթայթման պայմանների ու կարգի վերաբերյալ մանրամասն կանոններ հրատարակելը:

223. Թե այժմ գործող և թե հետագայում հրատարակվելիք հատուկ որոշումների հիման վրա և համապատասխան վորոշումներով ու սահմանված կարգով տեղավորվող գաղթականներին տրվում են արտոնություններ համապետական և տեղական տարապարհակներից (զորակոչ, պարենհարկ և այլն) ամբողջովին կամ մասամբ ազատվելով նոր տեղում հաստատվելու առաջին տարիների ընթացքում, այլ և ուրիշ արտոնություններ՝ նոր տեղում բնակություն հաստատելու համար ոգնելու նպատակով:

224. Հողագործ ազգաբնակչության կեցած վայրերի սահմաններում, իրենց մշակվիք հողերին մոտենալու նպատակով կատարվող տեղավորումը, ազաբակներ և գյուղական կազմելը կատարվում է հողաշինարարության կարգով, նախատեսվում է հողաշինարարական նախագծերով և տեղավորման մեջ շահագրգռված հողագործների ու նրանց միությունների ծախքով:

Ծանոթություն. — Գաղթողներին և տեղավորվողներին նպաստելու կարգն ու պայմանները այն հասարակությունների կողմից, վորոնց միջից նրանք արտագաղթում են, վորոշում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը պատշաճ վարչությունց համաձայնությունը:



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Յերես	2	տող	22	Տպագրված է կենտրոնական	Պետք է լինի կենտրոնական
»	11	»	5	սահմանները	սահմանները
»	13	»	32	բոլով	բոլոր
»	14	»	30	գտնող	գտնվող
»	15	»	14	հաղամասերը	հաղամասերը
»	16	»	22	յեղրակացության	յեղրակացության
»	17	»	21	կամ գպրոցներում	կամ առաջին և յերկրորդ տա- տիճանի գպրոցներում
»	29	»	30	դորձագիր	դորձագիր
»	44	»	14	դրված	արված

ՀՀ Ազգային գրադարան



NL0943002

ՀՀ Ազգային գրադարան



NL0943002

1492

565